ՀԵՂԻՆԷ

Վ. Է Պ

Տ-ին Մ. ՄԱՐԻՍԵԱՆԻ

(Շարունակութիւն [1])

IV

Հարսանիքից մի քանի օր անցած, առաւօտեան ժամի 11-ին նորապսակները նստած թէյ էին խմում ու լեզուակռիւ անում իրար հետ։

—Զէ՛, ներողութիւն կանես, Միշէլ, բաւական է ինչ երես տուիր ինձ, այսուհետև ես պէտք է քեզ համար թէյ ածեմ։

—Հա՛, հասկանում եմ, քաղաքավարի կերպով յիշեցնում ես, որ դու իրաւունքներ ունես, պատասխանեց Ամիրանովը շարունակ պաչպչելով կնոջը։

—Լաւ, ասենք թէ հէնց այդպէս է, յեսոյ, խօսքդ ի՞նչ է, բարձրաձայն ծիծաղով ասաց Հեղինէն ու կուռը մեկնեց, որ խլի մարդու ձեռքից թէյամանը,

—Զէ, հոգիս, այսօր էլ դեռ դու հիւրս ես, իսկ վաղւանից արքունիքիս բոլոր գանձերն ու իշխանութիւնը կը յանձնեմ գեղեցկուհուս։ Բայց դորա փոխարէն բռնակալ ամուսինը կը պահանջի, որ ինքը լիակատար իշխան լինի գեղեցկուհու սրտի վերայ, կատակի էր գցում Ամիրանովը, շոյելով կնոջ մազերը։

---

[1]) Տե՛ս «Մուրճ»-ի № 6։

Նորապսակների քաղցր զրոյցը ընդհատեցին հիւրերը։

—Տեսէք, տեսէք, ասաց Նոցանից մէկը, մեր նորապսակները արդէն կուռում են իրար հետ։

—Հապա ի՞նչ էիր կարծում, Թամար, ի՞նչ է՝ մարդու գնացողի առաջ միայն վարդեր են փռուած, ծիծաղելով ասաց Ամիրանովը քրոջը, որ մօտ երեսուն տարեկան տղեղ օրիորդ էր։

Այդ ասելով նա պինդ սեղմեց կնոջ ձեռքը և կպցրեց իւր շրթունքներին։

—Ինչ ե՛ս եմ տեսնում, մինչև ձեր փշերին հասնելը դեռ շատ կայ, ասաց միւս, մօտ քառասուն տարեկան, այրի քոյրը և տարօրինակ կերպով ծիծաղեց։ Բայց կատակը դէնը կենայ, Հեղինէ, ես ձեզ մի նկատողութիւն ունիմ անելու։

—Ի՞նչ։

—Դուք ձեզ շատ անզգոյշ էք պահում, այդպէս չի լինի։

—Ճիշդ է ասում, սիրելիս, ընդհատեց այրու խօսքը մօրաքոյրը, երէկ այն անձրևովը չը պիտի տանից դուրս գայիք։

—Բան չը կայ, ես սովոր եմ, առաջին անգամը չէ։

—Բայց այժմ ձեր դրութիւնը ուրիշ է. մեզանում ընդունած չէ, որ նորահարսը պսակից յետոյ առաջին օրերը տանից դուրս գայ, վրայ բերեցին մօրաքոյրն ու այրին միասին, աշխատելով խլել խօսքը մէկ մէկի բերանից։

—Ինչո՞ւ որ, զարմացած հարցրեց Հեղինէն։ Միթէ՞, Միքայէլ, պսակուած կնոջ բառարանումն էլ շուտ-շուտ է պատահում այդ անտանելի «ընդունուած չէ»-ը։

Խնամիների սրտին հարսի խօսքերը դիպան. նոքա միմեանց նայեցին հարցական հայեացքով։

—Մեր պարտականութիւնն էր ձեզ զգուշացնել, հիմա դուք գիտէք, հոգիս, կուզէք լսէք մեր խորհրդին, չէք ուզի հօ՛, քէֆը ձերն է, ինչ սրտներդ տայ այն կանէք։

—Լաւն էլ հէնց այդ է, հիմա էլ ով է ուշ դարձնում զանազան ասէկօսէների, մէջ ընկաւ Թամարը։

—Ամեն բան քո դատողութեամբն ես արել, նորա համար ես տանը մնացել, պառաւել, է՛, չարաչար խէթ-խէթ նայեց քրոջ վերայ այրին։

Տեսնելով որ բանը վատ է վերջանալու, Ամիրանովը խոսակցութիւնը ընդհատեց ու առաջարկեց հիւրերին գնալ քաղաքից դուրս զբօսնելու։ Նոքա սկզբում չէին համաձայնում, բայց մարգ ու կին այնպէս թախանձում էին, որ չէր կարելի խաթրները կոտրել։

Զբօսնելուց տուն վերադառնալով Ամիրանովները իրանց սեղանի վերայ երկու հիանալի փունջ տեսան. Կատարինէ Սահառունին էր ուղարկել։

—Միքայէլ, ե՞րբ ենք գնում ընկերուհուս մօտ. արի հէնց այսօր գնանք, ասաց Հեղինէն մարդուն։

—Չէ, սիրելիս, գեռ շուտ է... ես շատ աղգականներ ու ծանօթներ ունեմ, ոչ մէկի մօտ չենք գնացել։

—Ի հարկէ չի կարելի, մէջ ընկաւ այրի քոյրը։ Ամէնից առաջ Սահառունիների մօտ գնալով, բոլորին ձեր դէմ կը գրգռէք։

Հեղինէն մի քիչ յօնքերը կիտեց։

—Գիտէք, քեռի, Ուբարովը եկել է, կմկմալով ասեց Թամարը գնալու ժամանակ։

—Վատ չի լինի, Միքայէլ, եթէ այցելութեան գնաս մօտը և ծանօթացնես նրան կնոջդ հետ, աւելացրեց միւս քոյրը։

—Այսինքն հաշտե՞մ հետը։ Չէ՛, ես երբէք չեմ մոռանայ այն անպատուութիւնը որ նա ինձ հասցրեց։ Բացի այդ, աչքի առաջ ունենալով Մոսկւայում նորա վարած անառակ կեանքը, ես կարծում եմ, որ Հեղինէին չի վայելի հիւր ընդունել նորան։

Ամիրանովը այնպիսի ձևով ասեց այդ, որ դժուար էր նրան առարկութիւն անել, այնպէս որ քոյրերը սուս ու փուս կապեցին գլխաշորերը և դնացին։

Մի բոպէ չանցած զանգը խփեցին և իսկոյն ներս վազեց Կատեան զուքաած զարդարուած։

—«Անունը տուր սուփրէն քցի», մենք հէնց նոր քո մասին էինք խօսում, հոգիս, ուրախ ուրախ դիմաւորեց նրան Հեղինէն և բռնելով երկու ձեռքից նստացրեց բազմաթանի վերայ։

—Երևի ուզում էիք իմ մօտ գալ, իսկ ես ձեզնից առաջ ընկայ։ Բայց հա, մոռացել էի, որ Միխայիլ Պետրովիչը ձևապաշտ մարդ է և չի կարող պաշտօնական այցելութիւններ չանել։

—Ի հարկէ, ծիծաղելով հաստատեց նորա խօսքը Ամիրանովը և հանեց նորա վրայից վերարկուն։

ՀԱՅԿ. ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

—Չի կարող չանել, Կատեա, յարգելի պատճառներ կան։

—Ով է կասկածում որ։ Ա՛յ, այս էլ իմ հոգևորը։

—Հեղինկ, դու ծանօթ ես չէ՞ Գէօ՛րգի Ալէքսանդրովիչի հետ։

—Ի հարկէ, Միքայէլ, ասեց Հեղինէն ուրախ ուրախ դիմաւորելով հիւրին։

—Որտեղարենք էիր մինչև այժմ, բարեկամ, չե՞ս ամաչում, արածդ ընկերավարի է՞ր։

—Ների՛ր, Միքայէլ, հարսանիքիդ հետևեալ օրն եմ եկել քաղաք։

—Իսկ Կատարինէի նամա՞կը։

—Նամակը չեմ ստացել, տիկին Հեղինէ։ Ես այնպիսի տեղերում էի թափառում, ուր փօստային հաղորդակցութեան ճանապարհներ չը կան։

—Հը, գործերդ ինչպէ՞ս են գնում. այն գործի համար, որ ուզում էիր սկսել, ընկերներ գտա՞ր, բարեկամաբար հարցրեց Ամիրանովը։

—Դեռ չէ, բայց յոյս չեմ կտրել։

—Բաւական է գործի մասին խօսէք, պարոններ, հրամայաբար ասեց Կատարինէն։ Աւելի լաւ է անցեալը յիշենք, անցեալից խօսենք,—կարգադրում էր նա, նստելով և առաջարկելով բոլորին տեղաւորուել սեղանի շուրջը, կասէիր իւր տանը լինէր։

—Տիկին Կատարինէ, կրա՛կէք, կրա՛կ։

—Ուրեմն զգոյշ կացէք, որ չայրուէք, Միխայիլ Պետրովիչ։ Այդ ասելով Կատարինէն վեր թռաւ տեղից և էլ մի տեղում դադար չէր առնում, վազվզում էր, այս կողմ այն կողմ։

—Ասէք, խնդրեմ, տիկին Հեղինէ, կինս միշտ այսպէս չարաճճին է եղել, ծիծաղելով հարցրեց Նորան Սահառունին։

—Հա, այդ կողմից նա շատ հաստատամիտ է, ամենևին չի փոխուել։ Բայց գիտէք, Գէօ՛րգի Ալէքսանդրովիչ, Կատեան ինստիտուտում ամէնքի սիրելին էր։

—Ուրախութեանս չափ չը կայ, Հեղինէ, որ դու ազատուեցիր վերջապէս քեռուդ կնոջից, արագախօսելով կտրեց Նորա խօսքը ընկերուհին. մենք այժմ կարող ենք շուտ-շուտ տեսնուել։

—Ասէք խնդրեմ, Գէօրգի Ալէքսանդրովիչ, ինչո՞ւ դուք չէիք գալիս քեռուս մօտ, չը նայելով որ Կատեան այնքան խնդրում էր։

Այդ հարցնելիս Հեղինէն այնչափ անկեղծ ու մտերմութեամբ էր նայում Սահառունուն, որ նա չը կարողացաւ անկեղծ չը պատասխանել նորան։

—Անկեղծ ասած, տիկին Հեղինէ, ես ոչ մի բանից այնքան չեմ վախենում, որքան մի որ և է հասարակութեան, ընկերութեան մէջ աւելորդ մարդ լինելուց։ Ինձ թւում է, որ ես միշտ աւելորդ կը լինեմ այն աղնւակիրթ շրջանում, ուր ձևապաշտութիւնից ամենաթեթև շեղումները յանցանք են համարում։

—Ճիշդ է, ոչ մի կարգին հասարակութիւն չի կարող տանել քո տաք վիճաբանութիւններն ու կծու հակաճառութիւնները, կատակով պատասխանեց Ամիրանովը։

—Ես էլ եմ շատ սիրում վիճաբանել. կը նշանակի մեր բնաւորութիւնները իրար կը բռնեն, ժպտալով ասաց Հեղինէն առանց լսելու մարդու վերջին խօսքերը։

—Խօսքով ընկանք. տուն գնալու ժամանակ է, ասաց Կատարինէն վեր կենալով տեղից։ Վաղը ժամի ինին շոր կարողը կը գայ մօտս։ Ինչո՞ւ չես վեր կենում, Գէորգ, չէ՞ դու ասում էիր, որ վաղւայ համար շտապ թուղթ ունիս գրելու։

—Կացէք, ո՞ւր էք գնում, ընթրիք կ'անենք, կը խօսենք դէսից դէնից, չը թողեց գնան Ամիրանովը և զանգահարեց։

Սեղանը գցեցին։

—Խմենք, Գէորգ, մեր և մեր սիրուն ընկերուհիների բարեկամութեան յարատևութեան համար։ Սկի մտքներովս կանցնէ՞ր, որ մենք երկու մտերիմ ընկերուհու վրայ ենք պակուելու։

—Բախտի բերմունքով այժմեանից մեր բարեկամութեան յարատևութիւնը ապահովւած է, աւելացրեց Հեղինէն ծիծաղելով։

—Կանայք, որքան յիշում եմ, հին ժամանակներից սիրոյ ու բարեկամութեան պաշտպաններ և խռովածներին հաշտեցնողներ են յիշւում, ասաց Սահառունին։

—Լսում ես, Կատեա, որքան յոյսեր են դնում մեր վերայ մեր մարդիկը։

—Թէ քաջ են թող խռովեն. չէ՛, ես նոցա հաշտեցնողը չեմ. լաւ լսէք, պարոններ։

Դեռ երկար շարունակում էր նոցա խօսակցութիւնը անցեալի յիշողութիւնների մասին։ Կէս գիշերից անց էր, որ նոքա բաժանուեցին իրարից։

V

Մեղրամիսները վերջանալու վերայ էին. նորապսակների համար սովորաբար սարքուող քէֆերից ու խնջոյքներից յետոյ, Ամիրանօվները արդէն սկսել էին խաղաղ ու անվրդով կեանք վարել իրանց պարզ ու մաքուր բնակարանում։ Ամբողջ տունը տակն ու վերայ անելուց ու կահ-կարասիքը իւր ճաշակովը տեղաւորելուց յետոյ, Հեղինէն սկսեց մեծ խնամքով կարգի բերել ու զարդարել իւր հիւրասենեակը որ շատ սիրուն սարքեց։

—Ա՛, Հեղիկ, ես շուտով բարձր պաշտօն կը ստանամ, ռոճիկս կ՚աւելցնեն, այն ժամանակ աւելի կը կարողանաս զարդարել սենեակը, ասաց Ամիրանօվը տեսնելով կնոջը հիւրասենեակը սարքելիս։

Մի ամիս անցած Ամիրանօվը նոր պաշտօն ստացաւ և բոլորովին անձնատուր եղաւ իւր պաշտօնական գործերին։

Բաւական է որքան ժամանակ կորցրեցի կնոջս վերայ, պէտք է սկսել գործով պարապել, մտածում էր նա ինքն իրան։

Միայն ռոճիկովս բան չի դուրս գայ, նիստ ու կացս փոխել չեմ կարող. փող որ ունենայի, գիտեմ ինչ կանէի, անցնում էր յաճախ Ամիրանօվի մտքովը։

Երէկ սիրտս ուզում էր ճաքել, երբ որ տեսայ, թէ իշխանուհի Շակունին ինչպէս յօնքերը կիտեց մեր սանդուխքներով բարձրանալիս։ Պատիժ է, մարդ չի կարողանում կարգին մարդկանց հետ գնալ-գալ ունենալ։ Լաւ չի՞ լինի կնոջս փոքրիկ դրամագլխին ձեռք տամ. այդ թէ ինձ և թէ կնոջս համար օգտակար կը լինի։

Երբ որ Ամիրանօվը յայտնեց իւր միտքը Հեղինէին, նա ասաց։

—Ինչ ուզում ես, արա, Միքայէլ, ունեցած չ՚ունեցածս քոնն է։

—Հոգի՛ս, սիրտս չի տանում, կսկծում է, երբ որ տեսնում եմ քո այժմեան խեղճ նիստ ու կացը այն ապրուստից յետոյ, որ...

—Լռիր, Միքայէլ, ընդհատեց նորա խօսքը կինը և ձեռքը դրեց բերանին։ Ես այժմ էլ շատ լաւ եմ ապրում։

—Ցոյս ունեմ, որ յետոյ կը կարողանամ փողերը լրացնել։ շարունակում էր մարդը առանց լսելու կնոջ խօսքերը։

—Սո՛ւս, սո՛ւս, ամօթ է, այդպիսի բաներ մի ասա. դու՝ երեւում է՝ ինձ դեռ լաւ չես ճանաչում։

—Բայց այն լաւ գիտեմ, հրեշտակս, որ եթէ քեզ շատ չը սիրէի, այդ բանը չէի անի։ Մարդը պինդ գրկեց կնոջը և մի քանի րոպէից յետոյ տանից դուրս եկաւ։

Այդ խօսակցութիւնից յետոյ Ամիրանովը իւր տան կահաւորութիւնը օր օրի վերայ աւելի ու աւելի շքեղացնում էր։ Հեղինէի համար այդ բաւական չէր, նորա սիրտն ուզում էր, որ մարդը իրան աւելի ժամանակ նուիրի, երեկոները հետը մնայ տանը, բայց նա միշտ զանազան ճշմարտանման պատրւակներով անկատար է։ Թոզնում կնոջ սրտի փափագը։ Խեղճը անհամբերութեամբ սպասում էր տօներին, կարծելով թէ՝ այն ժամանակը մարդը ոչինչ գործ չ՚ունենալով ամբողջ օրը իւր հետ կը լինի։

Հեղինէն մէկ-մէկ խնդրում էր մարդուն, որ իւր համար բարձր ձայնով կարդայ մի որ և է գիրք, որ ինքը լաւ չէր կարողանում հասկանալ։ Սկզբում նա չկամութեամբ էր կատարում կնոջ խնդիրքը, իսկ յետոյ սկսեց քաղցրութեամբ համոզել նորան, որ իւր սիրուն գլուխը այդպիսի չոր ու ցամաք, վերացական բաներով չը լցնի, այլ այնպիսի գրքեր կարդայ, որով իրանց շրջանին պատկանող մարդիկ առհասարակ հետաքրքրւում են, կամ թէ երաժշտութեամբ պարապի, որի հմտութիւնը, նորա ասելովը, կնոջ ամենասիրուն զարդերից մէկն է։

Կինը՝ ի հարկէ՝ հակառակ էր մարդու յայտնած մտքերին և մնացել էր շարած, թէ ինչպէս նա այդքան շուտ սկսել էր դաւաճանել իւր գաղափարներին։

Ծանօթներից ու խնամիներից Հեղինէին ամենից յաճախ այցելում էին տալերը—Ամիրանովի քոյրերը. մեծ տալը միշտ խառնւում էր նրանց ընտանեկան գործերին։

Ոչինչ հաճութիւն չը ստանալով իւր տալերի ընկերութիւնից, Հեղինէն մէկ-մէկ խնդրում էր մարդուն, որ երեկոները գնան իւր այս կամ այն ընկերուհու մօտ։ Մարդը սկզբում աշխատում էր համոզել նորան, որ ձեռք քաշի այդ անօգուտ ծանօթութիւններից, բայց տեսնելով որ չի կարողանում համոզել, զանազան ճշմարտանման պատրւակներով հրաժարւում էր կնոջ հետ նրանց մօտ գնալուց։

Մի անգամ խօսք ընկաւ անկեղծ բարեկամութեան ու մտերմութեան մասին։ Հեղինէն ապացուցանում էր այն ընկերութիւնների օգտակարութիւնը, որոնք հիմնուած են անկեղծութեան ու մտերմութեան վերայ։

—Գլխիցդ հանի, Աստուածդ սիրես, այդ ցանցառ մտքերը, անհամբերութեամբ ընդհատեց նորա խօսքը Ամիրանօվը։ Գիտեմ, այդ այն երկու սանտիմենտալ ընկերուհիներիցդ լսած կը լինես, որոնք հասարակութեան մէջ եղած ժամանակ երկու խօսք չեն կարողանում իրար հետ կապել ու անդադար կարմրում են։

—Ինձ թւում է, որ մարդու աղքատութիւնն ու համեստութիւնը ծաղրի առարկայ չեն կարող լինել,—տաքացաւ Հեղինէն։

Նա շուռ եկաւ և ուզում էր գնալ, բայց մարդը կանգնացրեց։

—Լսիր, հոգիս, ասածս ճիշտ չես հասկացել։ Ես ուզածս այն է, որ դու մտերմանաս այնպիսի մարդկանց հետ, որոնք կարող են նպաստել զարգացմանդ, որոնք կարող են քեզ մարդամէջ մտնող, ասող-խօսող ու մարդավարի վարուղ կին դարձնել։ Լաւ է, որ հենց մէկը մի քիչ սրտովդ չի լինում, մի խօսք էլ է հետը չես խօսում։

Ամիրանօվը երկար ու բարակ բացատրում էր իւր միտքը։ Նա ուզում էր պարզ և անկեղծ Հեղինէին ճարպիկ և վայելչակիրթ կին դարձնել։

Այսպիսի դէպքեր աննշան փոփոխութիւններով բաւական յաճախ էին կրկնւում ամուսինների մէջ և Հեղինէն ակամայ յիշում էր, որ իւր մարդը մի քանի ամիս առաջ, նշանած ժամանակը, բոլորովին ուրիշ տեսակ մարդ էր երևում։

Մի օր իրիկնապահին Ամիրանօվենց մօտ հիւր եկան Կատարինէն ու իւր մարդը։ Հեղինէն դեռ նստած տեղիցը չէր վերկացել նոցա դիմաւորելու համար, որ ընկերուհին, ձեռներն իրար խփելով, աղաղակեց։

—Լա՛ւ էք անցկացնում մեղրամիսներդ։

—Ինչո՞վ է վատ որ, պատասխանեց Հեղինէն աշխատելով ժըպտալ. և ակամայ մտքովն անցաւ, թէ որքան քիչ ժամանակ է նստում մարդը իրան,—առաւօտը վաղ գնում է ծառայութեան մինչև ճաշ, ճաշից յետոյ էլ իսկոյն պարկում է քնելու ու սպասի, որ քնից պէտք է վերկենայ. վերջապէս վեր է կենում ու իսկոյն գնում է

իւր իշխանաւորի՝ գենեռալ Միհրանովի կնոջ մօտ նրա համար զանազան յանձնարարութիւններ կատարելու կամ թէ մի քիչ նստում է ու յետոյ գնում էլի նրա մօտ պրէֆէրանս խաղալու։ Եթէ ազատ րոպէներ մնում է՝ իրան երեխայի նման փաղաքշում, գուրգուրում է, դէսից դէնից մի քանի խօսք է խօսում հետը, ասելով թէ շատ ցաւում է, որ նրան չի կարող աւելի ժամանակ նուիրել, հետը երկար նստել, ժամանակ անցկացնել։

Հեղինէն՝ հաւատում էր նորա ասածին, բայց չէր կարողանում սովորել մենակութեան։

—Ի՞նչ ես ընկել մտքիդ հետ, Հեղիկ, հարցրեց Կատեան ուրախ ձայնով ու մօտեցաւ պատուհանին։ Տեսէք, ի՞նչ լուսնեակ գիշեր է. դուրս եկէ՛ք, ման եկէ՛ք, չէ՛ք ուզում ման գալ, միասին մի բան կարդացէք, թէ չէ ի՞նչ էք ամեն մէկդ մի անկիւն մտել ու փիլիսոփայի նման մտածում, կարծես աշխարհիս հոգսերը ձեզ են տուել։

—Ա՛յ այդպէս, այդպէս, մի քիչ նախատեցէք Հեղինէին, թէ չէ շուտով գլխիս «կապոյտ գուլպա»[1]) կը դառնայ, վրայ բերեց Ամիրանովը։

—Այդ ի՞նչ է ձեռիդ, Գէորգ։

—Տիկին Հեղինէին խոստացածս գրքերն է։

Հեղինէն շնորհակալութիւն յայտնեց Սահառունուն ու սկսեց հետաքրքրութեամբ թերթել գրքերը։

—Լա՛ւ, լա՛ւ, յետոյ կը նայես, արի, քեզ բան ունեմ ասելու, ասեց Կատարինէն ու զօրով քաշ տուեց նորան պատշգամբը։

Նրանք որ դուրս եկան սենեակից՝ Ամիրանովը խէթ-խէթ նայեց Սահառունու վերայ։

—Աստուած սիրես, Գէորգ, կամ Հեղինէին այդ տեսակ գրքեր մի բեր կամ թէ ինքդ արի հետը կարդա։ Ես որ վաղուց է էլ այդպիսի փիլիսոփայութիւններով չեմ պարապում և՝ բացի դորանից՝ ժամանակ չունեմ, գործերով խեղդուած եմ, մինչև անգամ չեմ իմանում թէ աշխարհիս երեսին ինչ է կատարւում ինչ չէ կատարւում։

---

[1]) «Կապոյտ գուլպա» Եւրոպայում անուանում են ուսումնական ձևացող կանանց։

Գործերս իբր թէ քիչ էին, Ելիզաւետա Բոգդանովնան էլ բարեգործական մասնաժողովների քարտուղարութիւնը դրեց վզիս։

—Դու էլ բան չունես, այդ անզգամի ձեռն ես տուել սանձդ. հօ՛ գիտես, որ երեսին ամօթի նշոյլ չը կայ, զայրացած սկսեց խօսել Սահառունին։

—Ես այդպիսի կարծիք չունեմ նորա մասին...

—Ինչպէս թէ. միթէ՞ քո կարծիքով անամօթութիւն չէ, որ որ մի հայ կին բան ու գործ է դարձրել աջ ու ձախ զրպարտել, հայհոյել հայերին, մինչդեռ նա՝ ընդհակառակը՝ պէտք է իւր պարտականութիւնը համարէր որքան կարելի է փարատել իւր շրջանի հասարակութեան մէջ մեր դէմ տիրող կանխակալ կարծիքները։ Մենք բոլորս աշխատում ենք որ բոլորն էլ կասկածով վերաբերուին նորան, իսկ դու...

—Շատ բան կարողացանք անել, չէ՞։ Հօ էլի կանանց մանկավարժական մասնաժողովի ամենագործունեայ անդամը նա է։

—Որովհետև գիտի, որ այդ միջոցով ամենից հեշտ է արիստոկրատների շրջանը նորա համակրութիւնը վայելել։

—Իսկ այն թէ ով է եղել քարտուղարը, ե՛ս թէ Մարկոսը, Կիրակոսը, ի՞նչ նշանակութիւն ունի, մէկ չէ՞։ Բացի այդ՝ Ելիզաւետա Բոգդանովնան այնքան էլ վատ կին չէ, որքան դու ես կարծում։ Զուր ես, եղբայր, մեղնում զաղափարական ազնուութիւն փնտրում։ Մեր հայերիս ճակատին գրած է, որ պէտք է չարչարանքով մեզ համար կեանքում ճանապարհ բանանք ու շատ անգամ՝ ակամայ՝ խորամանկութիւն գործ դնենք պատահած արգելքներին յաղթելու։ Ես էլ գիտեմ, որ այդ շատ ցաւալի բան է, բայց ինչ արած, եղբայր, աշխարհքն այդպէս է, մի մարդ հօ չի կարող բոլորի դէմ գնալ։

—Հա, ի հարկէ, այդ սկզբունքով որ դատելու լինենք, ամեն բանի վերայ պէտք է թեթև նայենք։ Որ այդպէս է էլ ինչո՞ւ ենք, ասա խնդրեմ, աշխատում ուսում տալ, կրթել ջահէլներին, դառն ծիծաղով պատասխանեց Սահառունին։

—Խօսքերդ շատ քաղցր են հնչում, Գէորգ, բայց շատ հետաքրքրական է, թէ արդեօք էլի այդ շարականները կերգէիր ու արհամարհանքով կը վերաբերուէիր պետական ծառայութեան, եթէ՝

բան է՝ զրկուելիր կալուածներիցդ ստացուող տարեկան երկու հազար բուբլու արդիւնքից։

Սահառունին ընկերներից շատ էր լսել այդ տեսակ նկատողութիւններ, արհամարհանքով նայեց Ամիրանովին ու աւելի լաւ համարեց լռել։

—Այնպիսի սքանչելի երեկոյ է, պարոններ, որ մեղք է տանը նստելը, լսեց տիկինների ձայնը։

—Ուրեմն գնանք ման գալու, վճռեցին ամենքը և բոլորը միասին տանից դուրս եկան։

—Հեղիկ, դու Գէորգի թեւն անցիր, իսկ ես քո մարդու, մի լաւ սիրաքստիկ լինենք ով աւելի շնորհք ունի։

—Դուք, Եկատերինա Իւանովնա, մեռելին էլ տեղիցը կը շարժէք, կենդանութիւն կը տաք. վերայ բերեց Ամիրանովը։

—Դուք, կարծեմ, մարդուս հետ խօսում էիք Միհրանովայի մասին։ Մարդս ասում է, որ նա շատ խելօք ու եռանդոտ կին է և ուզում է ինձ նորա հետ մօտ ծանօթացնել, ճոնապարհին դիմեց Հեղինէն Սահառունան։

—Հա՛, ճիշդ է, նա շատ եռանդոտ կին է ու յիմար էլ չէ, հեգնօրէն պատասխանեց Սահառունին, բայց վախենալով, թէ չը լինի Միհրանովան մարդ ու կնկայ մէջ կուապատճառ դառնայ, խօսքը կտուրը գցեց։

Երկու երեք անհետաքրքրական նախադասութիւններից յետոյ Հեղինէն ասաց։

—Զարմանալի է, Գէորգի Ալեքսանդրովիչ, դուք երկար ժամանակ արտասահմանումն էք եղել ու ոչինչ չէք պատմում այնտեղի մասին։

Հեղինէին թուեց, թէ իւր վերջին խօսքերը անախորժ տպաւորութիւն գործեցին Սահառունու վերայ. նա տարակուսած շարունակեց։

—Կարելի է ձեր արտասահմանում անցրած ժամանակը անախորժ յիշողութիւնների հետ է կապուած. շատ ցաւում եմ, որ սկսեցի խօսել արտասահմանի մասին։

—Ո՛չ, ո՛չ, տիկին Հեղինէ, աշխուժով ընդհատեց նորա խօսքը Սահառունին։ Ոչ մի տեղ ես այնպէս բախտաւոր չեմ եղել, ինչպէս արտասահմանում։ Չը կարծէք թէ ես միշտ հիմիկուայ պէս մռայլ եմ

եղել։ Ոչ, սիրտս այն ժամանակ լիքն էր ուրախ զգացմունքներով։ Մենք ամենքս, տիկին Հեղինէ, օտարութեան մէջ աշխատելիս, մեծ յոյսեր ենք տածում վերջը մեր հայրենիքի համար օգտակար գաւակ լինելու. մարդ յոյսով է ապրում, հոգին փառաւորւում է, սիրտը միշտ լիքն է լինում քաղցր զգացմունքով, որ չի կարելի խօսքով նկարագրել։ Այո, մենք ամենքս էլ այդ ժամանակ, այդ բարոյապէս հարուստ ժամանակներս, զգում էինք, որ բարի և ազնիւ ենք։ Այդ խօսքերից յետոյ Սահառունին մտախոհ գլուխը քաշ գցեց։ Զը նայելով որ նա իրան զսպում էր, բայց էլի մի թեթև հոգոց դուրս թռաւ նորա կրծքից։

Հեղինէն այդ նկատեց ու մտերմաբար նայեց Սահառունուն։

—Ցետոյ երևի հիասթափուեցիք. մեղաւորն ո՞վ է։

—Բացի ինձանից ես ոչ ոքի չեմ մեղադրում. շատ բան որ յետոյ կատարուեց, ես պէտք է առաջուց գուշակէի. դորա մասին, տիկին Հեղինէ, մենք մի օր կը խօսենք երբ որ յարմար ժամանակ լինի։

Երկար նոքա լուռ գնում էին, վերջապէս Հեղինէն նորից խօսք բաց արեց.

—Որքան նկատում եմ, Գէօրգի Ալեքսանդրովիչ, դուք ձեր վերաբերմամբ շատ խստապահանջ էք։ Ես բառ առ բառ յիշում եմ այն խօսքերը, որ դուք մարդուս, երբ որ նա ձեզ խորհուրդ էր տալիս ծառայութեան մտնելու,—«ամեն մարդ պէտք է քննական կերպով վերաբերւի ինքն իրան, իւր իմացածին, իւր ոյժերին, հաստատ իմանայ թէ ինքն ինչ կարող է անել և յետոյ մի բանական նպատակ որոշելով դիմի նորան, աշխատի իրագործել»։ Ձեր այդ խօսքերը այնպիսի խոր տպաւորութիւն գործեցին իմ վերայ, որ մինչև այժմ էլ չեմ կարողանում մոռանալ։

Սահառունին զարմանքով ու երախտագիտութեամբ նայեց Հեղինէին և մտածեց, «ահա թէ ում սրտումն են արձագանք գտնում իմ խօսքերը»։

—Շատ շնորհակալ եմ, տիկին Հեղինէ, ձեր համակրութիւնը ինձ երկար ժամանակ սիրտ կը տայ գործելու, ասաց նա ժպտալով և մտերմաբար մեկնեց նորա ձեռքը։

—Վաղը եկէք մեզ մօտ ճաշելու, Գէօրգի Ալեքսանդրովիչ, կը թերթենք նոր գրքերը, խնդրեց Հեղինէն մնաս բարև անելիս, մա-

նաւանդ որ դուք վաղը մենակ էք մնալու, Կասեան ամբողջ օրով գնալու է իւր սանամոր մօտ։

—Մեծ ուրախութեամբ։

—Հազիր ձեր բնագիտութեան դասերն էլ կը սկսէք, իսկ ես ու Միխայիլ Պետրովիչն էլ ամիսը մի անգամ ձեզ կը քննենք, ուրախ ուրախ ասաց Կատարինէն։

—Իսկ երեկոյեան բոլորս միասին կ'երթանք նւագահանդէս. բարեգործական մասնաժողովն է սարքում իւր ուսումնարանների օգտին, ես արդէն ձեզ համար տոմսակներ առել եմ. համաձա՞յն էք, առաջարկեց Ամբրանովը։

—Շատ լաւ, շատ լաւ,—միաձայն բացականչեցին Հեղինէն ու Կատարինէն։

VI

Սահառունին, քսան տարեկան հասակում աւարտելով ուսումը Մոսկուայի համալսարանի բնագիտական բաժնում կանդիտատի աստիճանով, գնաց արտասահման իւր մասնագիտութեան մէջ կատարելագործուելու համար։ Զորս տարի արտասահմանում մնալով, նա լուրջ և բազմակողմանի կերպով ուսումնասիրեց բնական գիտութիւնները. վերջին տարին նա գլխաւորապէս պարապում էր գործադրական քիմիայով։

Մանուկ հասակում հեռացած լինելով Կովկասից նա երազի նման էր յիշում իւր հայրենիքը, բայց նորա սրտում մնացել էր և տարէց տարի զօրանում էր ջերմ սէր դէպի իւր հայրենակիցները։ Երբ որ Սահառունին վերադարձաւ իւր հայրենի Ե. քաղաքը, Անդրկովկասի նահանգական քաղաքներից մէկը, նորա սիրտը լի էր ազնիւ ձգտումներով. նա ուզում էր օգտակար լինել իւր հայրենիքին, գործադրել իւր ձեռք բերած գիտութիւնը և քաղել իւր երկարամեայ աշխատանքների պտուղը։ Առաջին ամիսը ամբողջ նա նուիրեց մօրը, քոյրերին ու եղբայրներին, որոնք մինչև նորա վերադարձը նորան տեսնելու յոյսով էին միայն ապրում։ Ինքն էլ շատ էր կարօտել նրանց, մանաւանդ մօրը, որի բարի պատկերը խորը տպաւորուել էր երեխայի յիշողութեան մէջ։ Հօրական տունը զարթեցրեց

երիտասարդի երևակայութեան մէջ մանկութեան տպաւորութիւնները. յիշեց նա թէ ինչպէս մայրը սովորեցնում էր իւր երեխաներին, ոչ թէ չոր ու ցամաք խրատներով, այլ իւր անձի օրինակով, կարեկցել, օգնել աղքատներին, ինչպէս ահա այս սենեակում ընդունում էր չքաւորներին, իւր ձեռով կարում—կարկտում աղքատ երեխաների շորերը և տօն օրերին իրան տալիս նոր շորեր, որ տանի նոցա բնակարանները. որքան քաղցր զգացմունքով էր յուզւում նորա սիրտը այդ ժամանակ։

Յիշեց այդ բոլորը Սահառունին և սիրով նայեց իւր՝ թէև բոլորովին անուսումն, բայց բարեհոգի և խելացի մօրը։

Իսկ նա, այդքան տարաբաղ բացակայութիւնից յետոյ վերադարձած տեսնելով, ուրախութիւնից քիչ էր մնում գժւի. պարծենում էր իւր որդովը, ինչպէս բոլոր մայրերը, և տանում էր իւր աչքի լոյսին բոլոր ազգականների ու ծանօթների մօտ՝ ցոյց տալու համար։

Ե. քաղաքի արտաքին տեսքը շատ անախորժ տպաւորութիւն գործեց երիտասարդի վերայ,—ծուռ ու մուռ, ցեխոտ, անանցանելի փողոցներ, անշնորհք, անճոռնի շինութիւններ, չորս կողմը կեղտ ու գարշահոտութիւն, առողջապահութիւն ասած բանի մասին լսած էլ չը կան։ Մի ամիս չ'անցած նա համոզւեց, որ Ե.-ի ներքինն էլ լիովին համապատասխանում է արտաքինին։ Հասարակութիւնը կազմում էին բնիկ հայերն ու Թուրքերը և՝ մասամբ եկւոր՝ ծառայողների դասակարգը։ Բնիկ ժողովուրդը, ստրկաբար հնազանդելով հին աղաներին, բոլորովին նահապետական կեանք էր վարում։ Պառաւ կանայք դեռ բերանները կապում էին, իսկ ջահելները հաղարից մի մի անգամ էր պատահում, որ տանից դուրս դայլին, այն էլ օտար մարդու պատահելիս շտապով երեսները դարձնում էին պատին։ Հրաւէրներին, ինջոյքներին միշտ կանայք տղամարդիկներից առանձին էին նստում, ուտում. մի խօսքով բացի մի քանի ընտանիքներից, որոնք անվերջ բամբասանքների առարկայ էին դարձել, բոլոր հայ կանայք փակւած կեանք էին վարում։

Խուլ գաւառական անկիւններում մարդիկ միշտ պատահելով ու տեսնելով իրար, իմանալով միմեանց կենցաղավարութեան բոլոր մանրամասնութիւնները, միմեանցից զզւած են լինում, և այդ պատ-

ճառով ամեն մի նոր անձնաւորութիւն դարձնում է իւր վերայ գաւառացիների ուշադրութիւնը։

Սահառունին ամեն կողմից հրաւէրներ էր ստանում, ամենքն էլ ցանկանում էին մի որ և է բանով փայլել նորա առաջ։ Նա ամեն տեղ գնում էր, բայց աւելի դիտում ու՝ լսում էր քան խօսում։ Սահառունու համար դժուար չէր նկատել, որ Ե.-ի հասարակութեան կրթուած կոչուած շրջանը զբաղուած է միայն պառաւական բամբասանքներով, անվերջանալի թղթախաղով՝ կոպէկանոցից սկսած մինչև աղարտ խաղերը՝ և աստիճանաւորների դատարկ կռիւներով։

Սահառունու Ե. գալու օրից կէս տարի էր անցել։ Նա շատ էր ուզում մի որ և է գործ գտնել, բայց դեռ ոչ մի գործ չէր գտնուում։ Ասենք Սահառունին բոլորովին պարապ չէր մնում. նա այնքան ժամանակ հայրենիքից հեռու էր ապրել, որ այժմ դիտելու և ուսումնասիրելու շատ բան ունէր. բացի այդ՝ աշխատում էր ծանօթանալ ժողովրդի դրութեան հետ, իմանալ ինչով կարող է օգնել նորան, և գէպքը եկած տեղը օգնում էր ուրախութեամբ։

Սահառունին բարեկամացաւ քաղաքային պատգամաւորների հետ և աշխատում էր նրանց վերայ ազդել հասկացնելով իրանց հասարակական պարտականութիւնները քաղաքի վերաբերմամբ, բայց նա շուտով համոզուեց, որ նոքա իսկական մարդիկ չեն այլ մեքենաներ։ Տեղային վարչութիւնը սկսեց նայել Սահառունու վերայ իբրև անվստահելի անձնաւորութեան վերայ, որ իբր թէ վայր է գցում իւր նշանակութիւնը ժողովրդի աչքում և քաղաքավարի կերպով այնպէս արեց, որ նա չը կարողանայ խառնուել քաղաքային գործերին։

Այդ միջոցին Սահառունին ծանօթացաւ Աբգարեանների ընտանիքի հետ. — մի այրի մայր և մի աղջիկ էին։ Տիկին Աբգարեանը ամուսնու մահից յետոյ իւր ձեռքն առնելով կալուածների, իրանց եկամուտների միակ աղբիւրի, կառավարութիւնը, ստիպուած էր միշտ Ե.-ում ապրել, թէև աղջիկը շատ էր խնդրում նորան, որ Թիֆլիս գնան ապրելու։ Աբգարեանների ընտանիքը իւր գաղափարներով, իւր կրթութեամբ Սահառունուն՝ անապատում պատահած՝ օազիս թւաց, իսկ տասնութ տարեկան սիրուն աղջիկը՝ մի շուշան այդ օազիսում։ Օրիորդի նորափթիթ գեղեցկութիւնը մարդու խելք էր տանում։ Նորա շարժուն դէմքի ամեն մի գիծը անմեղութիւն ու աշխոյժ էր

արտայայտում։ Սահառունուն որ թողնէին, ամեն երեկոյ հիւր կերթար Աբգարեանների մօտ, բայց մայրը չէր թողնում։

—Իմացի՛ր, Գէորգ, ասում էր նա համոզիչ եղանակով, եթէ ամեն օր գնաս գաս նոցա տունը ու յետոյ չը պակուես աղջկայ վերայ, անուն կը կոտրուի քաղաքում և էլ քեզ ոչոք աղջիկ չի տայ։

Սահառունին աւելի ևս մօտ ծանօթացաւ և բարեկամացաւ տիկին Աբգարեանի հետ, երբ որ երկուսով սկսեցին աշխատել օրիորդաց դպրոց հիմնել ե. քաղաքում։

—Նաւտո՞վ կը բացուի մեր ուսումնարանը, հարցրեց մի օր տիկին Աբգարեանը երեկոյեան թէյի ժամանակ։

—Պէտք է յուսալ, որովհետև քաղաքացիներից շատերը համարեա թէ համոզուել են, որ օրիորդաց ուսումնարանը անհրաժեշտ բան է։

—Ես էլ, Գէօրգի Ալէքսանդրովիչ, աշակերտուհիներին երաժշտութիւն ու երգեցողութիւն դաս կը տամ, ուրախ ուրախ առաջարկեց տիկին Աբգարեանի աղջիկը։

—Ափսոս, օրիորդ, որ այդ առ ժամանակ աւելորդ կը լինի մեր աշակերտուհիների համար, ծիծաղելով ասեց Սահառունին։ Դուք հայերէն ու ռուսերէն կարդալ—գրել կը սովորեցնէք, համաձա՞յն էք։

—Լա՛ւ։

—Ես համոզուած եմ, որ ձեզ պէս վարժուհու ձեռքի տակ մեր աշակերտուհիները շատ առաջ կերթան։

—Մի՞թէ,—Կատարինէն չը կարողացաւ պահել ծիծաղը և փախաւ սենեակից։

—Մի շարաթ յետոյ քաղաքացիներից տասը—տասնհինգ հոգի, որոնք զարգացմամբ բարձր էին ամբոխից, Սահառունու երկար ու բարակ յորդորներից յետոյ վերջապէս յանձն առան որոշեալ գումար նուիրել օրիորդաց դպրոց հիմնելու համար։

Սահառունու ուրախութեանը չափ չը կար։ Ծողովը վերջանալուց յետոյ նա ուրախ զուարթ դուրս եկաւ և դնաց փոխ-նահանգապետ Միհրանովի տունը։ Այնտեղ այդ երեկոյ խնջոյք էր ի պատիւ Թիֆլիսից եկած երկու բարձրաստիճան պաշտօնեաների։

—Աստ՛ք խնդրեմ, Գէօրգի Ալէքսանդրովիչ, դեռ ձեռք չէք

վերցրել օրիորդաց դպրոց հիմնելու մտքից,—հարցրեց Նորան տանտիկինը, Ելիզաւետա Բոգդանովնան։ Նա նստած էր Նորեկ երկու հիւրերի մէջ տեղը և շողոքորթաբար նայում էր նրանց երեսին։ Լաւ չի՞ լինի մի ուրիշ բանի համար գործ գնել փողերը՝ այնպիսի մի բանի համար, որ աւելի օգտակար լինի քաղաքին։

—Ի՞նչ բանի համար, ասէք խնդրեմ, բարկացած ընդհատեց Նորա խօսքը Սահառունին։

—Բան չունե՞ս, Գէորգ, ասեց Նորան Պետրոսեանցը, որ Նորա հին ընկերներից էր, ինչ ես երկար ու բարակ խօսում։ Այդ խօսքերը արտասանելիս Պետրոսեանի տգեղ, թուխ և սև մորուքով պատած դէմքը տժգոյն արտայայտութիւն էր կրում։

Պետրոսեանցը պատանեկական հասակից արդէն վառվում էր սիրով դէպի իւր ազգը, տանջւում էր Նորա ցաւերով... Նա հասարակ վաճառական տղայ էր և դժւարութեամբ էր կարողացել համաձայնեցնել հօրը, որ իրան թոյլ տայ բարձրագոյն ուսում ստանալու։ Նա քսանչորս տարեկան էր երբ որ համալսարան մտաւ։ Զքաւորութիւնը և ուսերէն վատ իմանալը սկզբում խանգարում էին Նորա պարապմունքներին, բայց տոկուն աշխատասիրութեան, հաստատակամութեան և ընկերների նիւթական օգնութեան շնորհիւ նա յաղթեց բոլոր արգելքները և վերադարձաւ հայրենիք բնական գիտութիւնների կանդիդատի աստիճանով։

Երկար ժամանակ զուր աշխատելով իւր մասնագիտութեան համապատասխան մի պարապմունք գտնելու, նա ակամայ ծառայութեան մտաւ վարչական բաժնում։ Թէև Պետրոսեանը գոհ էր իւր ստացած չնչին ռոճիկից, բայց տժգոհ էր իւր դրութիւնից, որովհետև վարչութեան մէջ ծառայելը Նորա սրտովը չէր։ Բախտը Պետրոսեանին երես չէր տուել. Նորա ամբողջ կեանքը մի անընդհատ կռիւ էր եղել կեանքի անբարեյաջող պայմանների հետ։ Այդ անընդհատ կռիւը Պետրոսեանին դիւրագրգիռ և դաժան բնաւորութեան տէր մարդ էր դարձրել, այնպէս որ շատերին նա անհամակրելի էր թւում։ Բայց Սահառունին Պետրոսեանին երեխայ ժամանակւանից էր ճանաչում և անկեղծ սիրում էր Նորան Նորա ազնիւ և ամեն մի լաւ գործի անձնուիրաբար ծառայելու պատրաստ սրտի համար։

—Չէ, ճիշտ ես ասում, Տիգրան, խօսելով, վիճելով բան չի

դուրս գայ։ Պէտք է աշխատել հանել մեր ժողովուրդը իւր այժմեան վիճակից, հնարաւորութիւն տալ նորան կրթելու, զարգանալու. մեզ ուսումնարաններ են պէտք, ուսումնարաններ՝, իսկ այժմ մենք համարեա չունինք ուսումնարաններ։ Տուէք ժողովրդին ուսումնարաններ։

—Ասելը հեշտ է, բանը՝ անելն է, դառնութեամբ արտասանեց Պետրոսեանը և ամբողջ մարմնով կուչ եկաւ։

Սահառունին մտածմունքի մէջ ընկաւ։

Որքան աւելի էր ծանօթանում նա Ե.-ի հասարակութեան հետ, այնքան աւելի էր զգում որ իւր և այդ հասարակութեան մէջ ոչինչ բարոյական կապ չը կայ, որ ընդհակառակը բոլորը սկսել են քաշուել իրանից. բաւական է մի բան ասի, մի բանի վրայ ուրախանայ կամ թէ մի կարծիք յայտնի, ամէն կողմից հազար ու մէկ դատողութիւն կը տան, կաղաւաղեն ասածը, կը բամբասեն։ Ճիշդ է, նա առաջ էլ գիտէր, որ իւր հայրենիքը թաղուած է տգիտութեան խաւարի մէջ, բայց այդքան չէր կարծում։ Ծանօթներն ու ազգականները հանգիստ չէին տալիս Սահառունուն, հարց ու փորձ էին անում թէ ինչ ծառայութեան է մտնելու. նա միշտ միևնոյնն էր պատասխանում,—թէ կը նայեմ, կը ծանօթանամ, կը տեսնեմ ինչ կայ, ինչ չը կայ, երևի մասնագիտութեանս համապատասխան մի գործ կը գտնեմ,—բայց ահա երկրորդ տարին է, ինչ Ե.-ումն է և դեռ ոչ մի հաստատ գործի չի կպել։ Քաղաքացիք սկսել էին նորա վերայ ծիծաղել, հրքիթը շատ է բարձրացրել, փիլիսոփայ է եկել մեր գլխին. այս արտասահմանի ուսումը խելքից գցում է մեր երիտասարդներին, որ այստեղ մնային ու գործով պարապէին, չէր լինի. պէտք է գնային պարապ քաշ գալ ու զաւզակութիւն անել սովորէին։ Այդպիսի խօսքեր շատ անգամ Սահառունու ականջին էլ էին հասնում, որովհետև բաւական ազատ, համարձակ էին խօսում, մանաւանդ մի դէպքից յետոյ.—Սահառունուն մի շատ շահաւէտ պաշտօն առաջարկեցին ի պատիւ նորա հօրեղբօր, որ քաղաքում մեծ ազդեցութիւն ունէր. Սահառունին հրաժարուեց. բոլորը մնացին ապշած և աւելի սկսեցին ծիծաղել նորա վերայ։

Սահառունին ուշ չէր դարձնի այդ ասէկոսէներին. բայց մօր թախանձանքն ու լացը հանգիստ չէին տալիս նորան։ Մայրը և իւր

տեգրը չէին կարողանում հասկանալ, թէ ինչ է ուզում Սահառունին, ինչու է հրաժարւում այդպիսի բախտից, որ հազարից մի անգամ է մարդու առաջը գալիս։

Սահառունին բոլորովին էլ պարապ չէր մնում. պաշտօնից դուրս էլ մարդ շատ գործ կարող է գտնել կատարելու։ Երկու ամիս էր ինչ նա իրան նուիրել էր մի գործի, որ համապատասխանում էր իւր գաղափարներին։ Մի օր գործով պարապելուց նա սաստիկ յոգնած ու տխուր տուն եկաւ ու տեսաւ որ մայրը աղջիկներին ու փեսաներին գլխին հաւաքած լաց ու շիւանը գրել է։

—Ի՞նչ է պատահել, մայրիկ, հարցրեց նա սրտացաւթեամբ։

—Էլ ինչ պէտք է պատահի, ուր գնում եմ, քո վատն են խօսում. իշխանները, աղաները հօ կատաղած են քո դէմ. ինչ բան ունես նրանց հետ, որդիս, ինչու ես նրանց հակառակ գնում։

Մայրիկ ջան, դու գիտես, որ բէգերից մէկը ուզում է խեղճ գիւղացիներից խլել հօրական, պապական նրանց պատկանող հողերը. ուզում է հարիւրաւոր ընտանիքներ կտոր հացից զրկել։ Նրանք էլ ինձ են դիմում, որ իրանց պաշտպանեմ։ Ի՞նչ անէի, ասէի գնացէք ինչ անում էք արէք, իմ բանս չի. թողնէի՞, որ հարիւրաւոր խեղճ մարդիկ դունէ դուռ ընկնէին։

—Գիտեմ, որդիս, այդ վաղուցուայ վէճ է, քանի տարի է գիւղացիք դատարանների շէմքերը մաշում են. գործը այնպէս խճճւել է, որ դու չէ, ով էլ դայ չի կարող արձակի, արի, հոգիս, ինձ լսի, ու ձեռք քաշի այդ գործից. ես գիտեմ, գիւղացիներին օգուտ չես տալու, միայն այն է, որ նրանց կը թշնամացնես մեր բոլոր ազգականների հետ։

—ԱղաՀով եղիր, մայրիկ, ոչ ոքի իմ պատճառով վնաս չի հասնի։ Թողէք այս գործը վերջացնեմ, էլ այստեղ չեմ մնայ, կերթամ Թ.-ս։

Այդ միջոցին ներս մտաւ հօրեղբայրը. բոլորը պատկառանքով վեր կացան տեղներից։

Սկսեց լաց ու կոծ, չորս կողմից աղաչում պաղատում էին, բայց Սահառունին իւր վճիռը փոխելու միտք չունէր. մնալ Ե.-ում, ուր ոչ մի առողջ գաղափար համակրութիւն չէր կարողանում գտնել, նորա կարծիքով նշանակում էր ողջ-ողջ գերեզման մտնել, որ միայն

խելացնորը կարող է անել։ Տեսնելով որ լաց ու կոծով բան չի դուրս գալիս, մայրն ու քոյրերը դարձրեցին իրանց աղերսալից աչքերը հօրեղբօր վերայ, իբրև տան մեծի վերայ, որ Սահառունու հօր մահից յետոյ նորա ընտանիքի գլուխն ու պաշտպանն էր համարուում։ Նա հպարտ-հպարտ մի խիստ ակնարկ գցեց շուրջը, և ծալապատիկ նստելով սկսեց մտահոգ կերպով յետ ու առաջ գցել սաթէ համրիչի խոշոր հատիկները։ Սենեակում տիրեց խորին լռութիւն, բոլորը նպատում էին, թէ ինչ կ'ասի հօրեղբայրը և հանդիսաւոր բոպէի ազդեցութեան տակ իրար երեսի էին նայում հարցական հայեացքով։

Վերջապէս հօրեղբայրը, համրիչը ձեռքին փաթաթելով և երեք անգամ հազալուց յետոյ, աչքերը բարձրացրեց դէպի Սահառունին ու սկսեց խրատական եղանակով.

—Որդի, քեզ լաւ յայտնի է, որ մենք ոչինչ չենք խնայել քեզ լաւ ուսում տալու համար. դու գիտես, թէ մայրդ ինչ դժուարութեամբ քեզ թողեց գնաս արտասահման, ու գնալուցդ յետոյ ինչպէս աչքը ջուր կտրած սպասում էր քեզ։ Որքան տանջուել, որքան զրկանք է քաշել նա քեզ համար, իսկ դու, ապերախտ, ինչով ես վարձատրում այդ բոլորը։ Ինչո՞ւ չես ուզում ծառայութեան մտնել, ի՞նչ գործ պէտք է գտնես որ դրանից պատուաւոր լինի. ախր ինչո՞վ է վատ ծառայութիւնը։ Մի հարցնող լինի թէ այժմ գործիդ անունն ինչ է,—տուտուց-տուտուց բաներ ես բռնում, օր չի անցնի որ մի խայտարակութիւն դուրս չը գայ, հիմա էլ՝ այդ բաւական չէ՝ ուզում ես մօրդ թողնել ու գնալ. աֆֆերի՛մ, աֆֆերի՛մ։

—Գէորգ ջան, աչքիս լոյսը, խելքի եկ, մեզ մենակ մի թո՛ղ, ընդհատեց հօրեղբօր խօսքը մայրը՝ աղաչելով։

Որդին քնքշութեամբ բռնեց մօր երկու ձեռքը։

—Մայրիկ, հանգստացիր, հո՛ չեմ կարող պարապ մնալ, ինչ անեմ որ այստեղ ինձ յարմար գործ չեմ գտնում։ Դու հո չես ուզիր, որ քո որդին փողոցները չափելով ման գայ։ Մայրիկ ջան, ապահով կաց, ես ձեզ չեմ մոռանայ, շուտ-շուտ կը դամ տեսնելու։

—Տեսէք, տեսէք, ծիծաղեց հօրեղբայրը, այստեղ իրան յարմար գործ չը կա՛յ։ Այ լաւ տղայ. ինչի պէտք է մօրը, քոյրերին բախտաւորացնել, նորանց համար փող աշխատել. հազիր ամբողջ տարին մեզ համար պարապ ման կը գանք ու քէֆ կը քաշենք։

Աստ, Աստծու սիրուն, մինչև հիմա մի դրօշ բերել ես տուն. է, դրօշն էլ քեզ լինի. ինչո՞ւ էիր գալիս ու մեր տան խաղաղութիւնը վրդովում։ Որա՞ համար էիր սովորում. արժէ՞ր այնքան փող փչացնել ուսմանդ վերայ, աւելի լաւ չէ՞ր լինի, որ ուրիշ բանի համար գործ դրած լինէինք այն փողերը։

Սահառունին յօնքերը կիտեց ու ուզում էր պատասխանել, բայց մայրը ձեռքով արեց, չը թողեց որ խօսի։ Խեղճը աղերսալից հայեացքը ուղղած որդուն, աչքերով խնդրում էր որ լսի, և աշխատում էր փոխել անախորժ խօսակցութիւնը, բայց, չը նայելով Նորա ղգոյշ վարմունքին, հօրեղբայրը էլի նեղացաւ և վիրաւորուած ձայնով ասաց։

—Հա, ի հարկէ, հիմա այս տանը կամ ես կամ Կօշայ ժամ։ հարը, խօսքիս ո՞վ է ականջ դնողը, ո՞ւմ են պէտք իմ խորհուրդներս։ Ա՛յ հիմա ձեր տան գլուխը, մատնացոյց արեց նա Սահառունուն։

Հօրեղբայրը վեր կացաւ թախտի վրայից. բոլորը Նորանից առաջ ոտքի էին կանգնել։ Սահառունուն շատ չէր դուր գալիս այդ սովորութիւնը, բայց իմանալով որ այդ սովորութեան հակառակ վարուելով բոլորին կը վիրաւորի, ինքն էլ վեր կացաւ տեղիցը։ Հօրեղբօրը այդ շատ դուր եկաւ և Նորա դէմքի արտայայտութիւնը մի փոքր մեղմացաւ։ Սահառունին լուռ կանգնած շրթունքները ծամում էր։ Նա գիտէր, որ ընտանիքի կրտսեր անդամների ներկայութեամբ ծերունուն հակաճառելը տեղական սովորութեան համաձայն մեծ վիրաւորանք է համարւում։ Բախտաւորաբար մի պատահական հանգամանք ազատեց Նրան այդ դժուար դրութիւնից. եկան ասացին, որ Պետրոսեանը եկել է, կանչում է, գործ ունի հետը։

Ընկերոջ հետ մօտ մի ժամ խօսելուց յետոյ Սահառունին առաջարկեց Նորան միասին դնալ Արգարեանների մօտ։

—Կարծեմ, այսօր Նրանց նշանակուած օրն է։

—Հա։

—Որ այդպէս է, կարող ես մենակ գնալ. այսօր ես գամ, ի՞նչ անեմ։

—Ինչպէս թէ ինչ անես։ Օրիորդ Արգարեանի նման հիանալի աղջկայ հետ խօսելն էլ զուարճութիւն է. կասես, կը խօսես, երա-

ժշտութիւն կը լսես։ Գիտեմ, գիտեմ, ինչու չես ուզում գնալ, Տիգրան, վախենում ես սիրահարուես։

—Է՛հ, եղբայր, ինչ կը սազի ինձ սիրահարուել, գրպանումս միներ են պար գալիս, ասաց Պետրոսեանը տարօրինակ կերպով ծիծաղելով և սկսեց պատմել իւր ծառայութեան ժամանակ պատահած անհամութիւնների մասին։ Իմացած կաց, եղբայր, որ ինչ որ ուրիշները անպատիժ անում են, եթէ մենք անելու լինէինք արժան չէր նստի մեզ։

—Է, ես այդ վաղուց գիտեմ։

—Եթէ ուզում ես ծառայել, պէտք է ազատ, անկախ հայեացքներդ ծալես, գրպանդ դնես, այս է փորձուած մարդու խորհուրդը։

—Ապահով կաց, Տիգրան, ես ծառայութիւն մտնողը չեմ։ Դու էլ վեր կաց միասին... Գնանք Թիֆլիս բախտ փնտրելու։

—Չէ, եղբայր, ես չեմ կարող հաստատ բանը թողնել անյայտի յետևից ընկնել. ամբողջ ընտանիք կայ վզիս։

Նոքա խօսելով մտեցան Արգարեանների տանը. խօսք ընկաւ Կատարինէի մասին։

—Գիտե՞ս, Գէորգ, Նորա աչքը քո վերայ է։

Սահառունին կարմրեց, բայց և միևնոյն ժամանակը ուրախացաւ։ Նա ինքը գրաւուած էր օրիորդովը. մի քանի ժամանակուանից սկսած օրիորդը Նորա գլխիցը չէր դուրս գալիս։

Արգարեանների հիւրասենեակում հաւաքուած սակաւաթիւ հասարակութիւնը ուրախ ուրախ խօսում էր առաջիկայ ուխտագնացութեան մասին. շուտով լինելու էր Սուրբ Գէորգի ուխտը։

—Դուք էլ ի հարկէ կը գնաք, դիմեց Կատարինէն Սահառունուն ու մինչև ականջատակերը կարմրեց։

—Այնտեղ կը տեսնէք Ե-ի ու շրջակայ բոլոր գիւղերի հասած աղջիկներին, մէջ ընկաւ Միհրանովան։

—Որոնց ծնողները տանում են ուխտատեղիները փեսացուներին ցոյց տալու համար, կարծես տօնվաճառ լինի, ընդհատեց զոքանչի խօսքը աստիճանաւորը։ Այնպէս չի, Ելիզաւետա Իօգդանովնա, այդ նպատակով են ուխտ գնում, չէ՞. կարծեմ, ձեզանից եմ լսել այդ։

—Ճիշտ է, ճիշտ։ Խա՛չը, մարդու զարմանքը դալիս է՝ տես-

նելով մեր ժողովուրդը. ո՛րքան վայրենի սովորութիւններ ունի, ասաց Միհրանովան և ինքնագոհ ժպիտով նայեց նահանգապետի կնոջը։

—Իսկ կապած բերանները տեսնելիս հո՛ մարդու ղղանք է գալիս, աւելացրեց Միհրանովայի աղջիկը դէմքը ծամածռելով։

—Ժամանակով այդ էլ կը փոխւի. ժողովրդի մէջ շատ խոր արմատներ են գցում սովորութիւնները. անկարելի բան է, որ դարերով եղած սովորութիւնը մի օրում արմատախիլ լինի, բայց հետզհետէ անպատճառ կ՝ոչնչանայ. ա՛յ, տեսնում էք, գուք հո՛ չէք...

—Ես ձեզ մի անգամ ընդ միշտ խնդրել եմ, Գէօրգի Ալեքսանդրովիչ, չարացած ընդհատեց խօսքը աիկինը, որ ինձ այստեղացիների շարքը չը դասէք, ինձ կրթել են կատարեալ...

—Ի հարկէ, ի հարկէ, վրայ բերեց Միհրանովան, իմ՝ աղջիկը ամենալաւ պանսիօններից մէկումն է կրթւել, ա՛յ, այս տարի էլ երկուսը կ՝աւարտեն ինստիտուտը։

—Ախ, հազար ներողութիւն, որ անգիտակցաբար ձեզ վիրաւորեցի. այսուհետև էլ չեմ մոռանայ, որ դուք եւրոպական ծագումից էք, կծուհեգնեց Սահառունին։

Միհրանովայի աղջիկը կարմրատակած դուրս եկաւ սենեակից։

Սահառունին ու Կատարինէն իրար նայեցին համակրութիւն արտայայտող հայեացքով։

—Ես վաղուց է բախտ չեմ ունեցել լսելու ձեր գեղեցիկ նւագածութիւնը։

Օրիորդը այնպէս նայեց Սահառունուն, կարծես, աչքերով ասելիս լինէր՝ «ձեր ցանկութիւնը ինձ համար սուրբ է», և մատեցաւ դաշնամուրին։

Կատարինէն շատ ընդունակ էր երաժշտութեան և հիանալի ածում էր. Սահառունին միշտ մեծ հաճութեամբ էր լսում նորա ածելը։

Արդէն կէս գիշերից անց էր, երբ որ նա ՇՆաք բարև ասեց Աբգարեաններին. տրամադրութիւնը շատ լաւ էր։

Մի՛ւս օրը Սահառունին Փայէտոն նստացրեց Կատարինէին, նորա մօրը և իւր քրոջը, և ինքը ձի նստած հետները ճանապարհ ընկաւ դէպի սուրբ Գէորգ։

Ցայէտանների, տարանտասների և՝ գոյնզգոյն գորգերով ու մետաքսեայ բարձերով, մուֆաքներով զարդարուած՝ սայլերի քարաւանը ձգւում էր ամբողջ ճանապարհի երկայնութեամբ մինչև ուխտատեղին, որ մի սարի գագաթին ծառերով շրջապատուած գեղեցիկ վանք էր։ Կառքերի կողքին ճաճանչին էին տալիս զուքուած ու զրահաւորուած իդիթները, նստած նժոյգների վերայ, որոնց արանքին զգոյշ շարժւում էին ոտաւորներն ու էշաւորները։

Ուխտատեղին հասնելով Սահառունին մի բարձր տեղ ընտրեց, որտեղից ամբողջ տեսարանը լաւ երևում էր։ Կատարինէն ծառին կռթնած, ուրախ դէմքով նայում էր տօնախմբութեանը։ Հիանալի տեսարան էր. ձիաւորները ձիարշաւ էին անում, մի տեղ պար բռնած երգում էին, մի քիչ հեռու դափ ու զուռնա էին ածում. ծափ ու ծիծաղը սար ու ձոր թնդացնում էին. աչքդ որ կողմը դարձնէիր ծաղկազարդ դալար կանաչի վերայ սպիտակ վրանների, վրանանման սարքած սայլերի ու ծառերի ստուերում քէֆ անող տղամարդկանց ու գոյնզգոյն շորեր հագած պարող աղջիկների ու նորահարսերի խմբեր կը տեսնէիր։ Սահառունին հիացած նայում էր օրիորդի կարմրած դէմքին, որ ոչ մի ժամանակ նորան այնքան գրաւիչ չէր թւել, ինչպէս այդ բոպէին։

—Դուք այսօր շատ ուրախ էք, օրիորդ, չէ՞։

—Շա՛տ, շա՛տ, բացականչեց նա, և վազեց մօր մօտ ու սկսեց նորան համբուրել։ Ի՞նչ լաւն ես այսօր, մայրիկ ջան։

Տեղը վերադառնալով Կատարինէն Սահառունու վերայ քնքոյշ հայեացք գցեց։

—Ես շատ եմ սիրում չորս կողմս լիութիւն ու գոյութիւն տեսնել։ Գիտէք, Գէօրգի Ալեքսանդրովիչ, ես որ թագուհի կամ մեծ հարստութեան տէր լինէի, ունեցածիս մեծ մասը ժողովրդական տօնախմբութիւնների վերայ գործ կը դնէի։

—Միթէ՞, ուրախ-ուրախ հարցրեց Սահառունին ու ծիծաղեց։ Իսկ ես, օրիորդ, երկիւղածութեամբ կը խոնարհուէի այդպիսի մեծահոգի թագուհու առաջ։

—Դուք ծիծաղում էք, բայց տեսէք թէ ինչ հիանալի բան է։ Խեղճերը բոլոր ցաւերն ու հոգսերը տանը թողած, դարդերը մոռացած, ուզում են սրտանց ուրախանալ, քէֆ անել։ Ինձ համար

այնքան էլ նշանակութիւն չունի, ես առանց այն էլ միշտ լաւ տրամադրութեան մէջ եմ, բայց խեղճերը...

Կատարինէի աչքերը հանդիպեցին Սահառունու աչքերին և նա կարմրեց։ Նայելով օրիորդին Սահառունին զգում էր, որ սիրտը լցւում է մի ինչ որ նոր, մինչև այդ ժամանակ նորան անծանօթ քաղցր զգացմունքով։ Նա կարծես մոռացել էր կեանքի բոլոր դառնութիւնները. նորա ապագայ կեանքը այժմ աւելի հրապուրիչ գոյներով էր նկարւում նորա երևակայութեան մէջ։

—Մայրիկ, մայրիկ, աղաղակեց յանկարծ Կատարինէն հեռուից տեսնելով մօրը, Գէօրգի Ալեքսանդրովիչին են մի քիչ նախատիր, ծաղրում է ինձ։

—Ընդհակառակը, ինձ մեծ զւարճութիւն պատճառեց ձեր ասածը, այդպիսի ցանկութիւնները միշտ անարատ ու ջերմ սրտից են բղխում։ Իմ կարծիքը սխալ դուրս չեկաւ, դուք հիանալի աղջիկ էք։ Սահառունին յափշտակութեամբ բռնեց Կատարինէի ձեռքը, բայց իսկոյն բաց թողեց։ Երանի նորան, որ կարժանանայ ձեր սէրին։

Օրիորդը աչքերը քաշ դցեց։

—Ինչի՞ վրայ էք այդպէս միտք անում, օրիորդ։

—Մտքովս անցնում է, թէ աւելի լաւ կը լինէր, եթէ դուք մեր քաղաքը եկած չը լինէիք, որովհետև ձեր գնալուց յետոյ սարսափելի տխուր կը լինի, արագախօսելով և բոլորովին անսպասելի կերպով արտասանեց Կատարինէն։

Վերջին խօսքերը նա հազիւ լսելի ձայնով ասաց ու սաստիկ կարմրելով սկսեց անթարթ նայել մօտ քառասուն քայլ հեռու վառւող կրակին։

—Չեմ կարող ասել թէ որքան ուրախ եմ, օրիորդ, որ կարող եմ հաւատացած լինել, թէ իմ բացակայութիւնը ձեզ համար զգալի կը լինի, յուզւած սկսեց խօսել Սահառունին մի փոքր լռութիւնից յետոյ։ Իմ սիրտս էլ դժւարութեամբ է հաշտւում այն մտքի հետ, որ մենք պէտք է բաժանւենք, եթէ...

Այդ րոպէին նրանց մօտեցաւ տիկին Արգարեանն ու Սահառունու քոյրը. նրանք վեր կացան և բոլորը միասին գնացին դէպի խարոյկը։ Այդ կրակի վրայ նոցա համար բոզբաշ, փլաւ սւ խորոված էին պատրաստում։ Ամեն տեղ խարոյկներ էին վառւում, ամեն տե-

ղից երգի ձայն էր գալիս. Սահառունին հետաքրքրութեամբ ու ուրախ սրտով մտնում էր գալիս՝ մի խմբից միւսը անցնելով։

Ճաշի ժամանակ և երեկոյեան տուն վերադառնալիս ամբողջ ճանապարհի ընթացքում Կատարինէն լուռ էր ու մտահոգ և խուսափում էր Սահառունու հայեացքից։ Սահառունին հասկանում էր օրիորդի հոգեկան վիճակը։ Նա վաղուց յափշտակուած էր օրիորդի գեղեցիկ դէմքով, անմեղ և վառվռուն բնաւորութեամբ. նորա սէրին արժանանալը նորան անհասանելի բախտաւորութիւն էր երևում իւր Ե.-ում քաշած տարի ու կէսուայ աքսորի մէջ։ Էլ երկար ու բարակ չը մտածեց Սահառունին. յարմար առիթ էր, առաջարկութիւն արեց օրիորդին։

Սահառունու մայրը իրան վիրաւորուած էր զգում։ Որդին ու հարսը գլխովը փարան էին գալիս, բայց էլի նա երկար ժամանակ չէր կարողանում մոռանալ, որ իւր անդրանիկը առանց իւր խորհրդի ու աջակցութեան է կին ընտրել։

—Տա՛լ Աստուած, այնքան ապրեմ, որ թոռներիս տեսնեմ, ուրախանամ, քիչ-քիչ մխիթարում էր նա ինքն իրան։

VII

Հարսանիքից մէկ-երկու ամիս յետոյ Սահառունին իւր կնոջ հետ գնաց Թ.-ս։ Թ.-սում այդ ժամանակ երիտասարդութեան առաջաւոր մասը մեծ եռանդով նուիրել էր իրան ժողովրդի կրթութեան գործին։ Ոգևորուած երիտասարդները ծիսական նոր-նոր դպրոցներ էին հիմնում և աշխատում էին բարեփոխել թեմական դպրանոցի վիճակը։ Ժողովրդի կրթութեան գործը շատ մօտ էր Սահառունու սրտին. նա հոգով սրտով անձնատուր եղաւ նորան։

Բայց պարապմունք գտնել անհրաժեշտ էր։ Երկար ժամանակ յարմար գործ չը գտնելով, Սահառունին վճռեց մտնել ծառայութեան մի տեղացի դրամատէրի մօտ, որ ուրիշների հետ համեմատելով գոնէ այն առաւելութիւնն ունէր, որ գործունեայ էր։ Պարապելով արդիւնաբերութեան դանազան ճիւղերով և յաճախ գործ ունենալով թէ կառավարութեան և մասնաւոր մարդկանց հետ, դրամատէրը այդ գործերը Սահառունուն էր յանձնում վարելու, որ այդպիսով միջնոր-

դի դեր էր կատարում։ Սահառունուն դուր չէր գալիս պաշտօնի անորոշութիւնը. նա չէր ընդունի այդ պաշտօնը, բայց դրամատէրը խոստացաւ նորան յանձնել շատ ձեռնտու պայմաններով իւր շուտով հիմնելիք գործարանի կառավարութիւնը։ Թէև այդ գործունէութիւնը Սահառունու մասնագիտութիւնից դուրս էր, բայց նորա գործնական կողմը նորան բաւական ծանօթ էր և դորա համար նա հեշտ կարող էր ուսումնասիրել և տեսական կողմը, որով և սկսեց պարապել պաշտօնից ազատ ժամերին։

Միայն մի բան լաւ չէր. գործը պահանջում էր, որ Սահառունին մի տեղ չը մնայ նստած, այլ ճանապարհորդի, այնպէս որ նա շատ յաճախ ստիպւած էր լինում մենակ թողնել կնոջը։

Կատարինէն մնաւ իւր սանամօր իշխանուհի Ռիկօձէի թևի տակ, որ տիկին Աբգարեանի մօտ բարեկամն էր։ Նա անզաւակ լինելով սէրը գցեց Կատարինէի վերայ, Կատարինէն էլ նորան սիրեց։ Իշխանուհին չափից դուրս բարի սիրտ ունէր, բայց մի քիչ թեթեւամիտ էր։ Արձակ կեանք վարելով՝ իշխանուհին գնացող-եկող շատ ունէր, ինքն էլ տանը քիչ էր նստում. ամեն օր կամ հիւրեր էր ունենում կամ ինքն էր հիւր գնում կամ թէ թատրոն, երեկոյթ, զբօսնելու էր գնում։ Իւր սանիկին նա մասնակից էր անում բոլոր իւր զւարճութիւններին, հետը տանում էր ամեն տեղ։

—Կատեա, դու որ գալիս ես՝ տունս կենդանութիւն է ստանում. քեզ պէս սիրուն ու գրաւիչ կին քաղաքումը քիչ կը գտնւի։ Հիմա քո այն ժամանակն է, որ միշտ պէտք է քէֆ անես, ուրախանաս։ Շուտով բոլոր երեկոյթների ու պարահանդէսների թագուհին կը դառնաս,—լսում էր անդադար նորահարսը և քիչ-քիչ սկսում էր ենթարկւել այդ գովասանական խօսքերի ազդեցութեան։ Երբ որ մարդը վերադառնում էր քաղաք, նա փաթաթւում էր վզին և սկսում էր յափշտակութեամբ պատմել իւր վայելած զւարճութիւնների մասին։

—Գէորգ, ի՞մ սանամայրը հրաշալի, պաշտելի կին է, յաճախ ասում էր նա մորդուն։

Սահառունին սկզբում ուրախ էր, որ իշխանուհի Ռիկօձէն չէ թողնում, որ իւր բացակայութեան ժամանակ Կատարինէն տխրի, ձանձրանայ, բայց երբ նկատեց, որ նա շատ է գրաւում զւարճու-

թիւններով, սկսեց ամէն միջոց գործ դնել, որ դատարկ, անխորհուրդ կեանք չը վարի։ Նա աշխատում էր հետաքրքրեցնել կնոջը լուրջ խնդիրներով, ընտրում էր նորա կարդալու համար ժողովրդականացրած գրուածքներ, երեկոյեանները կամ հետը նորան թատրոն էր տանում կամ թէ հրաւիրում էր իւր տունը իւր ամենաուրախ ընկերներին, մի խօսքով երևում էր, որ նա ամէն ջանք գործ էր դնում, տանու կեանքը կնոջ համար դուրեկան դարձնելու։ Քանի որ մարդը հետն էր լինում Կատարինէն բոլորովին գոհ էր լինում այդ տեսակ կեանքից, բայց հենց որ մարդը քաղաքից հեռանում էր նա էլի ընկնում էր դարձութիւնների յետևից։

Կնոջ վարած կեանքը այնպիսի ծախսերի տակ էր գցում Սահառունուն, որ նորա կարողութիւնից վեր էր։ Սահառունին պարտք անել չէր սիրում, բայց ստիպուած էր պարտք առնել կնոջ պահանջները կատարելու համար, յոյս ունենալով շուտով վճարելու իւր ապագայ պաշտօնից ստանալիք ռոճիկից, իսկ երբ որ շաքարի գործարանը գլուխ չ'եկաւ, նա սաստիկ մտահոգութեան մէջ ընկաւ և սկսեց իրան աւելի յարմար ու ձեռնտու գործ փնտրել։ Կրամատէրը նկատելով այդ և չ'ուզենալով զրկուել Սահառունու պէս աշխատաւոր, ընդունակ և բարեխիղճ օգնականից խնդրեց որ դուրս չը գայ իւր մօտից, իւր բոլոր գործերի հաւատարմատար շինեց նորան և ռոճիկը առաջուանից երկու անգամ աւելցրեց։ Սահառունին ստիպուած էր ընդունելու նորա առաջարկութիւնը, որովհետև ուրիշ գործ գտնելու յոյս չը կար։ Ստանձնելով իւր նոր պաշտօնը նա ուզէր չ'ուզէր պէտք է երևան հանէր առաջուայ կառավարիչների անբարեխիղճ գործավարութիւնը, որոնք զանազան միջոցներով կորելիս էին եղել բանուորների փողերը իրանց գրպանը լցնելու համար։ Սահառունու ցանկութիւնն էր միայն բարեխղճութեամբ վերաբերուել իւր պաշտօնին, բայց նա իւր բարեխղճութեամբ թշնամիներ վաստակեց։

— Էհ, Իէորգ, ես չէի ասում, որ քո այդ նորամուծութիւնների շնորհիւ. վատամարդի կը լինես ու շատերին կը զրգռես քո դէմ, ասաց նորան մի օր փողոցում նորա ընկերներից մէկը՝ Ասունին։

Ասունին տանու մարդու պէս էր ընդունուած Սահառունիների մօտ։ Նա ուսանողական չորս տարուայ կեանքի ընթացքում Սահառունու հետ ապրելով բարոյապէս ենթարկուել էր նորա ազդեցու-

թեանը և այժմ էլ այդ ազդեցութեան տակ էր, թէև ինքը այդ չէր նկատում։ Նորա սմենաբնորոշ յատկութիւնը նորա անշահասէր կամակատարութիւնն էր ու անհոգ ուրախութիւնը։ Նա սիրում էր նոր նոր տպաւորութիւններ, իսկ այնքան դրական խելք չունէր, որ այդ տպաւորութիւնները խոր հետք թողնէին մէջը։

Աւարտելով ուսումը համալսարանի իրաւաբանական բաժնում, նա իբրև Կովկասեան թոշակաւոր իսկոյն տեղ ստացաւ դատաստանական մասում Կովկասի մի նահանգում, որտեղից մի տարի անցած նորան փոխադրեցին Թ-ս։

—Ձիշտ, Գէորգ, դարդ չունէիր, գլխիդ դարդ շինեցիր, կարեկցաբար կրկնեց Ասունին փոքր ինչ լսելուց յետոյ։

—Այդպիսի բաներից, Աղեքսանդր, ես չեմ վախենում, դուռսա գործը յաջող գնայ։

Անցաւ մի ամիս, երկու ամիս, Սահառունին տեսաւ, որ գործը առաջ չի գնում, իսկ ինքը օր օրի վերայ աւելի ու աւելի թշնամիներ է վաստակում իւր պաշտօնակիցների միջից։

Սահառունին օրէց օր աւելի ու աւելի հաստատ էր համոզւում, որ չարիքը շատ խոր արմատ է գցել, որ ծառայողների անբարեխղճութիւնը այնքան սովորական բան է դարձել, որ էլ անազնւութիւն չի համարւում։

Այդ անհամութիւնները այնքան զզուեցրել էին Սահառունուն, որ նա վճռեց ընդ միշտ թողնել իւր պաշտօնը։ Յարմար առիթ էլ կար.—երկու դրամատէր շատ ձեռնտու պայմաններով կապալով էին վերցրել Թ-սին մերձակայ մի կալւածք և քանի ժամանակ է առաջարկում էին Սահառունուն ընկերանալ իրանց հետ։

Սահառունին, նոցա հետ պայման կապելուց յետոյ, այնպիսի թեթևութիւն զգաց, կարծես շալակիցը մի ահագին սար վայր ընկաւ։

Տուն վերադառնալով, նա կնոջը խորհուրդ տուեց առ ժամանակ տանու ծախսերը կրճատել։ Շատ քաղաքավարի կերպով բացատրեց նորան իւր միտքը Սահառունին, բայց էլի տհաճութեամբ լսեց կինը նորա ասածը։

Ամուսինների կեանքի այդ տագնապի ժամանակն էր, որ Ամիրանոֆն ու Հեղինէն պատկեցին։ Կատարինէն սրտով ուրախ էր այդ

բանին։ Նա առժամանակ ամեն բան մոռացութեան տուեց և դրաւուեց իւր վաղուցուայ ընկերուհու բարեկամութեամբ։ Սահառունուն մեծ ուրախութիւն էր պատճառում նոցա բարեկամութիւնը և նա մեծ յոյսեր էր դնում կնոջ լուրջ, համեստ ու սակաւապահանջ ընկերուհու բարերար ազդեցութեան վերայ։ Բայց մի քանի ամսից յետոյ Կատարինէն սկսեց սառել դէպի Հեղինէն. նա էլ առաջուայ նման ուրախ չէր զգում իրար Հեղինէի հետ եղած ժամանակ և երբեմն— երբեմն մինչև անգամ կարծես նորան նեղութիւն էր պատճառում ընկերուհու ներկայութիւնը։

VIII.

Որոշած երեկոներից մի երեկոյ Ելիզաւետա Բոգդանովնա Միհրանովան քաղցր սրտայուզութեան մէջ քայլում էր՝ երեկոյթի համար սարքած, պատրաստուած՝ դահլիճներում։

Նորա մարդը բարձր պաշտօն ստանալով Սահառունուց երկուամիս առաջ էր Ե.-ից Թ-ս տեղափոխուել։

Միհրանովան այն տեսակ կանանցից էր, որոնք ոչ մի միջոցից չեն խորշում իրանց ամուսինների համար բարձր շրջաններում աչքի ընկնող դիրք ձեռք բերելու համար։ Մի կողմից՝ պատրաստ լինելով ամեն տեսակ ծառայութիւն մատուցանելու մեծերին, միւս կողմից՝ նա իւր մարդու սատրապների գլուխը տանում էր հազար ու մի խնդիրքներով ու յանձնարարութիւններով, բայց ի հարկէ նա այդ այնպիսի վայելուչ ձևով էր անում, որ շատ չէր ծակում կողմնակի մարդկանց աչքը։ Ճարպիկ և խորամանկ բնաւորութեան տէր լինելով նա անդամ էր գրում և ընտրում բոլոր բարեգործական յանձնաժողովներում, բայց անվարձ լաւութիւն անելու սովորութիւն չունենալով, նա իւր կօպեկանոց աշխատանքի համար տասնապատիկ վարձատրութիւն էր ուզում ստանալ։

Միհրանովան գնում գալիս էր ու շուտ-շուտ կանգ առնում սեղանի առաջ, բաց էր անում գեղեցկաշէն, արկղիկը և հաշւում թէ որքան տոմսակ ունի ծախելու բարեգործական նպատակով տրուող նուագահանդէսի համար։ Ամիրանովը երևի մի քսան տոմսակ կը վերցնի, Կատարինէ Սահառունին տասը, իշխանուհի Նակունին երեսուն, յետոյ մտքումը էլի շատերին հաշուելով վճռեց, որ կը

մեայ մօտ հարիւր տոմսակ։ Է՛հ, ոչինչ, այդ էլ դժուար չի լինի ծախել, մոռացաց նա. անցեալ երեքշաբթի թէև հաստատ չը գիտէի, բայց բոլորին ասացի, որ այս անգամ իմ մօտ կը լինի և կը երգի գեղեցկուհի պրիմադոնան. այդ լաւ հրապոյր է ջահելների համար, շատերը կը գան... իսկ կոմսուհին ո՞րքան կ՚ուրախանայ, ոչ մի բան նորան այնքան զւարճութիւն չի պատճառում, որքան յաջող սարքած նւագահանդէսը, յաղթական եղանակով համարեա լսելի ձայնով արտասանեց նա և սկսեց մոռացել ընթրիքի մասին։ Ընդամենը երեսուն հոգու համար է պատւէր տւած, իսկ կարելի է յիսուն հոգի գան. պէտք կը լինի աւելի շատ պատրաստել... բայց ոչինչ, որ շատ լինին թղթախաղից մօտ երեսուն ռուբլի կը հաւաքւի, մխիթարում էր ինքն իրան Միհրանովան։ Պէտք է այնպէս կարգադրել, որ գոնէ տասը սեղանի վերայ խաղան... Պէտք է հոգս տանել բարեգործական ներկայացման համար... Աղջիկներս, մանաւանդ Նադեան, շատ գեղեցիկ կը լինին իրանց դերերում, վաղը պէտք է խօսել Կոմսուհու հետ այդ ներկայացման մասին...

Մէկ մէկի յետևից եկող հիւրերը ընդհատեցին Ելիզաւետա Բօգդանովնայի մտախոհութիւնը։

—Ախ, սիրելիս, չեմ կարող ասել թէ որքան ուրախ եմ ձեզ տեսնելով, չափազանց սերալիր կերպով ընդունեց նա Կատարինէ Սահառունուն, որ ներս մտաւ Աստնուհետ ձեռին բռնած մի ծրար։

—Այդ ի՞նչ էք բերել, սիրելիս։

—Խոստացած եմ բերել վիճակախաղի համար։

Ելիզաւետա Բօգդանովնայի աչքերը ուրախութիւնից փայլեցին։

—Ո՞րքան բարի էք գուք, ասաց նա շողոքորթութեամբ և համբուրեց Կատարինէին։ Բայց ինչու էք այսքան թանկագին բաներ բերել, աւելի հասարակ բաներն էլ ձեռք կը տային։

—Ոչինչ, այդպիսի մանր-մունր բաներ շատ ունեմ։

—Է՛հ, ինչ էիք նեղութիւն կրում։

Նա Կատարինէի բերած իրեղէնները դնելու յարմար տեղ էր փնտրում, որ բոլորն էլ տեսնէին ու օրինակ առնէին նորանից. իսկ Աստնին ու Կատարինէն այդ ժամանակ կամաց խօսում էին։

—Մինչև այժմ մարդու գլուխ էր տանում, իսկ այժմ ասում

է, թէ ինչու էիք նեղութիւն կրում։ Օ՛ֆ, Աստուած փրկի, ազատի այդպիսի բոշաներից։

—Կամա՛ց, կը լսի, Ալեքսանդր Վասիլիչ. ինչ արած ամէն մարդ մի պակասութիւն կ՚ունենայ, առանց դորան չի լինի։

—Բայց դորա պակասութիւնները անհաշիւ են։ Ա՛յ, շուտով Պրիմաղաննայի բենեֆիսն է լինելու, տեսէք թէ ինչպէս է փորեր պոկելու մեզանից։ Ինչ արած. հօ չի կարելի որ աղջիկների վարժուհու բենեֆիսին իրանց ընտանիքի կողմից ընծայ չը տայ։

—Զէ, չէ, այդպիսի բան չի անի, դուք զրպարտում էք նորան, ուշքը ցրուած պատասխանեց Կատարինէն և նայեց նոր եկող հիւրերին ու շատ ուրախացաւ տեսնելով նրանց մէջ երիտասարդ և գեղեցիկ Տրունեցկուն։

Տրունիցկին, շքեղազգեստ, մի ձեռին գլխարկը բռնած, միւս ձեռքում կոտրտելով պտտացնում էր մենակոցը, լորնետը և ինքնավստահ, յանդուգն հայեացքով նայում բոլորովին ուրից մինչև գլուխ։

Միհրանովայի աղջիկները, Նադեան և Սոֆիան, տեսնելով ցանկալի հիւրին, քչփչացին կողքներին կանգնած օրիորդներին՝ «տեսա՞ք, որ ասում էինք թէ այսօր Տրունիցկին կը լինի մեզ մօտ», և ուրախուրախ դիմաւորեցին նորան։

Մեծ քոյրը Նադեան սիրուն, կարմրայտ, սևահեր և գեղեցկակազմ օրիորդ էր. ծնողներն ու ծանօթները յափշտակուած նորա գեղեցկութեամբ երեխայ ժամանակից նորան երես էին տուել. նորա դէմքը հպարտութիւն, գոռոզութիւն էր արտայայտում։ Սոֆիան մի տարով էր նորանից փոքր. նա ոչնչով աչքի չէր ընկնում, թէև դիմագծերը կանոնաւոր էին, բայց շատ լղար ու բութիկ էր։ Երկուսն էլ կրթուել էին Թ..սի ամենալաւ համարուող պանսիոններից մէկում, ուր բացի վայելուչ ձևերից ու ֆրանսերէնից էլ ուրիշ համարեա ոչնչի վրայ ուշք չէին դարձնում։

Անուշադիր թողնելով միւս բոլոր հիւրերին օրիորդ Միհրանովաները բաց էին արել իրանց հաճոյախօսութիւնների տոպրակը Տրունիցկու համար։ Նա, ըստ երևոյթին, շատ էլ ուշք չէր դարձնում նոցա խօսքերին և աչքերով ումոր փնտրում էր։

Վերջապէս գտաց, մտածեց նա և սլացաւ դէպի Կատարինէն։

—Թոյլ տուէք, Կատարինա Իւանովնա, հրաւիրել ձեզ կադրիլի և մազուրկայի։

—Ուրախութեամբ, համաձայնեց նա ժպտալով դէմքով։

Միհրանովայի աղջիկների դլխին կարծես սառը ջուր ածեցին. նոքա անյայտացան։

—Ուրախութեանս չափ չը կայ, որ ինձ արժանացրիք այդ պատուին։ Ո՞ր աստղիցն էր այս բախտը, սկսեց հաճոյախօսել Տրունիցկին։

Կատարինէն կոտրտուելով գլուխը յետ գցեց ու ինքնագոհ կերպով ծիծաղեց. այտերը փոս ընկան և երևացին սպիտակ, գեղեցիկ ատամները։ Այդ րոպէին նա հիանալի էր։ Տրունիցկին աչքը չէր հեռացնում նորա երեսից։ Կատարինէն զգում էր, որ ինքը նորան դուր է գալիս։

—Ոչ մի տեղ չէք երևում, Ադոլֆ Անդրէիչ, ասաց նա փոքր ինչ լռութիւնից յետոյ։

—Եթէ ամէն տեղ հանդիպէի այնպիսի սքանչելի էակների... խօսքը բերնումն էր, որ Կատարինէին մօտեցաւ Հեղինէ Ամիրանեանը և քաշ տուեց տարաւ հետը։

Միհրանովաները և մի քանի ուրիշ օրիորդներ ճանկեցին Տրունիցկուն։

Դահլիճը լցուում էր հիւրերով. տանտիկինը ամէն մէկին դիմաւորում էր աւելի կամ պակաս սիրալիր կերպով նայելով թէ ով և ինչ աստիճանի տէր էր։

—Ցրւեցի՞ք տոմսակները, Թոմա, և դիմեց նա մի փոքրահասակ, թիկնաւէտ, բայց գեղեցիկ երիտասարդի։ Նա նոր էր աւարտել ուսումը Պետերբուրգի համալսարանի ֆիզիկա-մաթեմատիկական բաժնում կանդիտատի աստիճանով։

Թոմաեանը բարեսիրտ և ընդունակ տղայ էր, բայց շարժուածքների կոպտութեան, անհոգ հագնուածքի և կծու, խիստ խօսակցութեան շնորհիւ կողմնակի մարդկանց դուր չէր գալիս։ Թոմաեանը այդ հասկանում էր, բայց սկի հոգը չէր. նա ոչ ոքի աչքը մտնել չէր աշխատում, ամենքի երեսին շիտակ խօսում էր և աւելի սիրում իրան ազատութիւնը ճնշել այս կամ այն նկատումներով։

—Դժբախտաբար, ո՛չ, Ելիզաւետա Բոգդանովնա, անհոգ կերպով պատասխանեց Թոմաեանը, վերադարձնելով նորան տոմսակները։

ես ձեզ առաջուց ասացի, որ այդպիսի բաներում ես շատ անշնորհք եմ։

—Ա՛յ քեզ բա՛ն, մի հատ էլ է չի ծախել, տհաճությամբ բացականչեց Միհրանովան տոմսակները հաշվելուց յետոյ և չարացած նայեց Թոմասեանին։

Միհրանովան նորա վրայ նայում էր իբրև իւր պարտապանի վրայ, որովհետև բացի այն որ նա իւր տանը շաբաթը չորս անգամ դաս էր տալիս, երկու-երեք ուրիշ ընտանիքներում իւր շնորհիւ դասեր էր գտել։

Ցոյս ունեմ, որ դուք աւելի ուրախ լուր բերած կը լինէք, դիմեց նա Ասունուն, որ մօտենում էր իրան։

Ասունին գրպանից հանեց շքեղ դրամատուփը և տուեց Միհրանովային տոմսակների փողը։

—Ի՞նչ հիանալի դրամատուփ է, մեր վիճակախաղի զարդերից մէկը կարող էր լինել։

—Թոյլ տուէք առաջարկել ձեզ...

—Չէ՛, չէ՛, ես կատակով էի ասում, ինչու զրկուէք...

—Ինչ էք ասում, արժի՞ խօսել այսպիսի չնչին բանի մասին։

—Տուէք, ես ուզում եմ միայն ցոյց տալ մի քանի տիկինների։

Միհրանովան առաւ դրամատուփը և դուրս եկաւ դահլիճից։

—Բարեկա՛մ, էլ ծործորակդ կը տեսնես ու դրամատուփդ չես տեսնի, ծիծաղելով ասաց Թոմասեանը ու խփեց ընկերոջ ուսին։

Այդ ժամանակ աճեցին կադրիլի ռիտուրնելը։

—Դրամատուփս «վայ տէր» կանչելով գնաց, գնամ գոնէ սիրուն օրիորդների հետ պարելով մխիթարուեմ, ասաց Ասունին ու մօտեցաւ Կատարինէին ու Հեղինէին, որոնք տաք-տաք խօսում էին։

—Կարելի՞ է ձեզ հրաւիրել, Կատերինա Իւանովնա։

—Ես պարում եմ Տրունիցկու հետ, առանձնապէս շեշտելով արտասանեց Կատարինէն։

—Իսկ ձե՞զ, տիկին Հեղինէ։

—Ուրախութեամբ, մանաւանդ որ այսօր սիրտս շատ է ուզում պարել։

—ԱղօլՖ Անդրէիչ, վիզ-ա-վի չը փնտրէք, արդէն կայ։

—Շատ ուրախ եմ, ասաց Տրունիցկին գլուխ տալով Հեղինէին։ Մի բանն է վատ, Ելիզա Պաւլովնա։

—Ի՞նչը։

—Les vis-á-vis sont des amis, իսկ դուք երբէք բարեհաճ չէք եղել դէպի ինձ։ Հեղինէն անտարբերութեամբ լսեց Նորա ասածը և իսկոյն խօսակցութիւնը փոխեց ուրիշ նիւթի վերայ։

—Չէք կարող երևակայել, Ալեքսանդր Վասիլիչ, թէ որքան լաւ է պարում Տրունիցկին. Նորա հետ պարելիս մարդու ոտները կարծես գետնին չեն կպչում, ոգևորութեամբ ասաց Կատարինէն Ասունուն։ Նա այսօր ամենից դեղեցիկն է, չէ՞։

—Ամեն բանում նա միշտ առաջինն է, հաստատեցին Նորա խօսքը կողքին կանգնած օրիորդները։

—Հեղիկ, ինչո՞ւ ես դու այդպէս սառը վարում Տրունիցկու հետ, հարցրեց Կատարինէն։

—Ինչու պիտի. նա սկի դուրս չի գալիս։

—Ո՛ւ. ա՛յ թէ ասացիր, հա. ասա տեսնենք Նորանից լաւ ո՞վ կայ այստեղ։ Ծի՞շտ է, ասում են որ նա քո փեսացուն է եղել։

—Այսինքն ուզել է լինել, բայց չի յաջողել։ Աստուած սիրես, ոչ ոքի չասես, ես չեմ սիրում պարծենալ եղած փեսացուներով։ Գէօրգի Ալեքսանդրովիչը այսօր կը վերադառնա՞յ։

—Խա՛չը, չը գիտեմ. ով է իմանում, կարելի է գայ։

Կատարինէի անտարբեր պատասխանը Հեղինէին շատ զարմացրեց։

—Մի ժամանակ ժամերն էր հաշում թէ երբ պէտք է վերադառնայ մարդը, իսկ այժմ կարծես Նորա համար մէկ է թէ մարդը քաղաքումն է թէ չէ, մտածեց նա։

—Մինչև հիմա դեռ չի եկել ձեր մարդը, խեղճ աղջիկ, հարևանց ի կերպով ասաց տանտիկինը։

—Նա այնքան շուտ-շուտ է ինձ մենակ թողնում, որ քիչ քիչ սովորում եմ։

—Ինչի՞ն էք սովորում, հարցրեց Տրունիցկին, որ այդ ժամանակ մօտեցել էր Նորան։

—Մարդու բացակայութեանը, Նորա տեղ պատասխանեց Միհրանովայի մեծ աղջիկը և այնպէս զոհ մնաց ինքն իրանից, կարծես մի քաջութիւն արեց, որ այդ ասաց։ Ասում են այժմ այդ մոդա է, աւելացրեց նա ուզելով սրախօսութիւն անել։

Տրունիցկին թեթև ժպտաց և հրաւիրեց Կատարինէին մի պտոյտ վալսի։

—Ո՞վ է ձեզ ասել, որ այդ մոդա է, ձեր լեկցիաներումը կամ՝ ինչպէս ասում են՝ բարձրագոյն կուրսերումն էք այդ սովորել, հեգնօրէն ասաց օրիորդին Ասունին։

—Ձեզ հետ չեն խօսում, խիստ կերպով պատասխանեց Նադեան և հեռացաւ։ Ասունին վազեց նորա յետևից։

—Մի պտոյտի տեղ երեքն արեցինք, ասաց Կատարինէն կարմրատակած ու ընկաւ առաջին պատահած աթոռի վերայ։

—Ձեզ հետ պարելիս մարդ չի նկատում թէ քանի պտոյտ է արել, դուք շատ թեթև էք պարում։

—Ձի՞շտ։ Այստեղ շատ շոք է, Ագոլֆ Անդրէիչ, գնանք միւս սենեակը։ Նոքա թեթևի անցրած դուրս եկան դահլիճից, գնացին հիւրասենեակը և բազմեցին վառարանի դէմ ու դէմ։

—Եկատերինա Իւանովնա, հոգիս, մի բան ածէք դաշնամուրի վերայ, ընդհատեց նոցա քաղցր tête à tête-ը տանտիկինը։ Կատարինէն բացասաբար շարժեց գլուխը։

—Խնդրեմ, սիրելիս, մի մերժիր. բոլորը անհամբերութեամբ սպասում են ձեզ։

Կատարինէն նայեց Տրունիցկուն, կարծես սպասում էր, որ նա խնդրի, և վերջապէս համաձայնեց։

Սկզբում կարծես մատները չէին հնազանդում նորա կամքին, բայց քիչ քիչ նա ոգևորուեց և դահլիճը լցուեց Շոպէնի վալսի հրաշալի գեղգեղանքով։

—Դուք էլ կ'երգէք, չէ՞, Ագոլֆ Անդրէիչ, դիմեց նորան Միհրանովան երբ որ Կատարինէն վերջացրեց վալսը։

Տրունիցկին երկար ժամանակ նազ էր անում, կոտրտում էր, զանազան պատճառներ էր բերում, որ իբր թէ չի կարող երգել, բայց տանտիկինը այնքան խնդրեց, որ նա վերջ ի վերջոյ ստիպուած սկսեց երգել և ներկայացրեց մի քանի տեսարաններ ռուս ժողովրդի կեանքից։ Նա այնպէս լաւ ներկայացրեց, որ բոլորը մնացին հիացած։

Նուագածութիւնը վերջանալուց յետոյ, քիչ-քիչ Կատարինէի շուրջը պատեցին համարեա բոլոր հիւրերը. գովասանքներ էր, որ սամեն կողմից թափում էին գլխին։ Ոչ միայն ջահէլները, հասակն

առաջներն էլ կողքիցը չէին հեռանում և աշխատում էին մի կերպ հաճոյանալ նորան։

Մարդ զարմանում էր Կատարինէի ընդունակութեան վերայ. հէնց որ մի հասարակութեան մէջ էր ընկնում, մէկ էլ տեսնես արդէն հասարակութեան ծաղիկն է դարձել, և որ գլխաւորն է միւս կանանց մէջ նախանձ չէր գրգռում։

Օրիորդ Միհրանովները Կատարինէի կողքը բռնել էին ու չէին հեռանում, որ իրանք էլ նորա ջրերն ընկնեն, նորա շնորհիւ միշտ կաւալերների հետ լինեն։

Կատարինէն իսկապէս ասած գեղեցկուհի չէր։

Ոչինչ նշանաւոր բան չունէր. միջին հասակ, համաչափ կազմուածք, կլոր, թարմ երես, շագանակագոյն մազեր, վառվռուն մուգ աչքեր, ծայրը մի քիչ վեր բարձրացած քիթ,—ահա նորա կերպարանքը։ Բայց միշտ սազով հագնուելու վարպետութիւնը, շարժուածքների բնածին նազուկութիւնը, այտերի սիրուն փոսերը, վարդագոյն շրթունքներից վայր չ'եկող անկեղծ, ուրախ ժպիտը նորան վերին աստիճանի նազելի ու սքանչելի էակ էին դարձնում։

—Կատեա, կուզես քեզ ճանապարհ գցենք տուն, ասաց նորան Հեղինէ Ամիրանեանը տուն գնալիս։

—Ոչ, merci, ես դեռ կը մնամ։

—Ուրեմն մնաս բարև։ Չը գիտես ո՞րտեղ է Միքայէլը։

—Եթէ թոյլ կը տաք, ես այս րոպէին կը գտնեմ նորան, ասաց Տրունիցկին։

Ամիրանովը կէս ժամ կը լինէր ինչ Միհրանովայի հետ առանձնասենեակում նստած քչփչում էր։

—Հանգիստ եղէք, ինձ վերայ յոյս դրէք, Ելիզաւետա Բոգդանովնա, բոլոր տոմսակները կը ծախուեն և ամեն բան ինչպէս հարկնէ կը լինի, ասում էր նա այն ժամանակ երբ որ Տրունիցկին մոտեցաւ նորան յայտնելու, որ կինը կանչում է տուն գնալ։

Ամիրանովի գէմքը մռնեց, բայց նա իսկոյն փոխեց գէմքի արտայայտութիւնը։

—Երբ պէտք է դու սոխորես վերջապէս աղաւ ասել խօսել հասարակութեան մէջ, մարդկանց հետ ինչպէս հարկն է վարուել, ասաց նա կնոջը ճանապարհին։

—Չեմ հասկանում, Միշէլ, թէ ինչ ես ուզում ասել. ո՞ւմ հետ եմ ես վատ վարուել։

—Ասածս այն է, սիրելիս, որ դու մինչև այժմ չես կարողանում այնպէս խօսել, այնպէս վարուել, ինչպէս ընդունուած է լաւ շրջաններում։ Ա՛յ, օրինակ առ Կատարինէից. տես ինչպէս է բոլորին գրաւում, իսկ քո վերայ մարդամէջի մարդու սիրտ չի էլ ուզում նայի, մի անկիւն կը մտնես ու լուռ—մունջ կը նստես։ Ճիշտն ասած, ես չէի ուզի որ դու միշտ այդպէս մնաս։

—Լաւ կանէիր, Միշէլ, որ մի ուրիշ բանի վերայ ուշք դարձնէիր։ Այս էլ քանի անգամ եղաւ, որ ես ասում եմ, թէ չեմ կարող բնութիւնս փոխել, ուր մնայ որ մի առանձին կարևորութիւն էլ չեմ տեսնում բնութիւնս փոխելու։

Մարդը անհամբերութեամբ ձեռքը թափ տուեց ու յօնքերը կիտեց։

—Զը պէտք է մոռանաս, Հեղինէ, որ մենք ապրում ենք կարգին, կրթուած մարդկանց հասարակութեան մէջ, որոնք իրաւունք ունին մեզնից պահանջելու...

—Իմ կարծիքով, տաքացած ընդհատեց նորա խօսքը կինը, մեզնից իւրաքանչիւրը աւելի լուրջ պարտականութիւններ ունի հասարակութեան վերաբերմամբ, քան նորա ամեն մանր-մունր պահանջներին ստրկաբար հնազանդուելը և նորա բոլոր յիմար կարծիքներին գին դնելը։ Երբեմն, ճիշտ է, մարդու սիրտն ուրախանում է, երբոր հաւաքւում խօսում են, բայց...

Այդ րոպէին նոցա ֆայէտոնի կողքով սլացաւ մի եռալուծ կառք, որ բոլորովին գրաւեց Հեղինէի ուշքը։ Լուսնի պայծառ լուսով նա տեսաւ կառքում՝ նստած տղամարդի դէմքը։

—Ախ, Սահառունին է, զարմացած ասաց Հեղինէն ու ձայն տուեց նորան, բայց նա արդէն հեռացել էր նոցանից։

Հեղինէն ուզում էր յետ դառնալ Միհրանովենց մօտ ու տուն տանել Կատարինէին, բայց մարդն ասաց, որ այդ անյարմար է։

IX

Ամիրանօվների ամուսնական կեանքի առաջին տարին լրանալու վերայ էր։ Հեղինէն օր օրի վերայ աւելի սաստիկ էր զգում, որ մինչև այժմ անօգուտ է անցել իւր կեանքը և յաճախ ինքն իրան հարց էր տալիս թէ ինչի՞ համար է նա ապրում աշխարհիս երեսին, ի՞նչ է նորա կեանքի նպատակը։ Վերջապէս նա հասկացաւ որ իւր հոգու երբեմն մութ, անորոշ ձգտումները այժմ պարզուել, որոշ կերպարանք են ստացել և գործ են փնտրում, բայց միևնոյն ժամանակ նա զգում էր, որ իրան պակասում է գիտութեան պաշար և որոշ աշխարհահայեացք։ Հեղինէին չէին կարող բաւարարութիւն տալ ոչ դաշնամուր ճնգճնգացնելը, ոչ ձեռագործով պարապելը, ոչ էլ աննպատակ ընթերցանութիւնը, մի խօսքով այն բոլորը, ինչով աշխատում են լցնել իրանց կեանքի դատարկութիւնը մեր կանանցից շատերը։ Նորա սիրտը ուրիշ բանի էր փափագում և ամեն անգամ, երբ նորա գլխում մի խելօք միտք էր ծագում, նա քիչ էր մնում որ ուրախութիւնից պար գայ, վազում էր մարդու մօտ և փաղաքշելով, գուրգուրելով խնդրում էր, որ լսի ինչ որ ինքը պատմելու է։ Իսկ նա այդպիսի դէպքերում, սառնութեամբ աչքերը գրելու թղթից հեռացնելով ու ծաղրական հայեացք ցցելով կնոջ վերայ, ասում էր «Հը՞, ցնորամիտ, էլի երևի խելքդ մի բան է փչել»։

Մի անգամ վերադառնալով մի երեկոյթից, ուր մարդը վռազ գործեր ունենալու պատճառով հետը չէր գնացել, Հեղինէն ուրախուրախ ներս մտաւ Նորա առանձնասենեակը։

—Պատմիր տեսնենք, լաւ։ ժամանակ անց կացրիր, շա՞տ պար եկար։

—Հա, Միշէլ, շատ ուրախ անցաւ ժամանակը։

Ես ծանօթացայ մի մանկավարժի հետ։ Նա ուզում է ամսագիր հրատարակել և կին աշխատակից է փնտրում։

—Ելիզա Բօգդանօվնան այնտե՞ղ էր, հօ՛ իմ մասին չը հարցրե՞ց, ընդհատեց Նորա խօսքը մարդը։

—Մանկավարժը առանձնապէս ուշադրութիւն է դարձնում մանկական ծաղկոցների վերայ, ուզում է մեզնում տարածել ծաղկոցներ։

Պատմելու ժամանակ Հեղինէի դէմքը գնալով աւելի ու աւելի աշխոյժ էր ստանում։

—Էհ, ի՞նչ անտանելին ես դարձել այսօր, քեզնից մարդավարի բան են հարցնում, իսկ դու ինչ-որ մանկական ծաղկոցների մասին ես խօսում, կոպտութեամբ ասաց Ամիրանովը։ Դլուխս կը կորեմ, թէ դու ամբողջ երեկոն այդ պեդանտ մանկավարժի հետ նստած չը լինես։

—Թէկուզ հէնց նստել եմ, յետո՞յ, բարկացած պատասխանեց Հեղինէն։

—Ախր չի լինի, քանդուած ինստիտուտում ես սովորել։ Էհ, երբ պէտք է վերջապէս խելքի գաս։

Ամիրանովը կնոջը գրկեց և մօտեցրեց իրան։

—Լսիր, թէ ինչ եմ ուզում անել, Միշէլ. ուզում եմ այժմ մանկավարժութեամբ պարապել. մանկավարժութիւնը վաղուց է ինձ հետաքրքրում։ Երբ որ լաւ սովորեմ, պրծնեմ, կ'աշխատեմ սովորածիցս օգուտ քաղել։

—Բաւական է փիլիսոփայութիւն անենք. կէս գիշերից անց է, քնելու ժամանակ է, ծիծաղելով ասաց Ամիրանովը բռնելով կնոջ ձեռքը։ Աւաւօտը վեր կը կենանք, կը տեսնենք։

Հեղինէն յանդիմանօրէն նայեց մարդուն և լուռ ու մունջ գնաց նորա յետևից։ Սա միշտ այսպէս բանը կատակի է դցում, իսկ ես շատ մեծ յոյս ունէի սորա աջակցութեան վերայ, մտածում էր Հեղինէն։ Ի հարկէ նա նորա համար է այդպէս անում, որ ես աշխատելու, գործ կատարելու անպատրաստ եմ, բայց ինձ վերայ ծիծաղելու տեղ նա կարող էր ընդհակառակը օգնել խորհուրդներով։ Այդպիսի մտածմունքներ խառվելով Հեղինէի միտքը, չէին թողնում, որ քնի։

Միւս օրը Ամիրանովները ճաշի էին հրաւիրուած Եակունու մօտ։

—Ճի՞շտ է, Միխայիլ Պետրովիչ, որ քեռիդ 75,000 ր. է տարել, հարցրեց Ամիրանովին ճաշի ժամանակ իշխանը։

—Կարծեմ ճիշտ է, շփոթուած պատասխանեց նա։

—Մարդ տանի, այդպէս տանի, հա՛. հը՞, Մայիկո, ի՞նչ կասես։

—Ափսո՛ս որ երկար ժամանակ չի վայելելու այդ փողերը, ասաց իշխանուհին խորհրդաւոր կերպով նայելով Ամիրանովներին։

—Էլի մի ասա՛ց. դու ո՞րտեղից գիտես թէ ինչքան ժամանակ է վայելելու։ Այս մեր կանայքը մի-մի մարգարէ են։ Ով է իմանում,

Հեղիկ, դու էլ ես մարգարէ դարձել, հը՞, հարցրեց քեռին ուսին խփելով։

Հեղինէն ժպտաց ու մեղմ սեղմեց նորա ձեռքը։

—Իշխանուհին ճիշտ է ասում, որ քեռու առողջութիւնը խախուտ է, մտահոգ կերպով ասաց Ամիրանովը։

Ճաշից յետոյ, Ամիրանովների գնալուց առաջ իշխանուհին Հեղինէի ձեռքը բռնելով քաշեց մի կողմ ու սկսեց տաք-տաք հետը խօսել։

—Հօ քեռու մասին չէր հարց ու փորձ անում, հետաքրքրութեամբ հարցրեց Ամիրանովը սանդուղքներից իջնելիս։

—Նա հետաքրքրում էր, թէ դու ինչու ես խռովել քեռուդ հետ, խորհուրդ էր տալիս հաշտուել հետը, հաւատացնում էր որ նա շատ լաւ մարդ է թէև մի քիչ յամառ է ու վարող բնաւորութիւն չ՛ունի։

—Հը՛մ... ճիշտ է ասում, խորհրդաւոր կերպով տրտասանեց Ամիրանովը։ Իսկ դու ի՞նչ ասացիր նորան։

—Ես ասացի, թէ իմ կարծիքով այժմեան հանգամանքներում հաշտուելը շատ օտարոտի, անյարմար բան կը լինի։

Մարդը խոր-խոր նայեց կնոջ վերայ։ Նա վճռեց, որ քեռու հետ հաշտուելու համար կնոջ միջնորդութեան վերայ յոյս դնել չի լինի։ Միայն քոյրերս կարող են այդ գլուխ բերել, մանաւանդ այրին. նա շատ վարպետ է այդպիսի բաներում, մտածում էր նա։ Վատ չի լինի, եթէ Ելիզաւետա Բոգդանովնային էլ մէջ գցեմ, նա էլ այդպիսի բաներում լաւ է։

Նոքա ամբողջ ճանապարհին իրար համարեա մի խօսք չ՛ասացին։ Կէս ժամի չափ առանձնասենեակում նստելուց յետոյ Ամիրանովը, առանց կնոջը բան ասելու, գլխարկը վերցրեց որ գնայ։

—Ո՞ւր, Միշէլ։

—Քոյրերիս մոտ, վաղուց է մօտները չեմ եղել։

—Ինձ չե՞ս հասցնի Սահառունիների առնը։

—Այքիս վրայ, մանաւանդ որ ճանապարհը մէկ է։

Սահառունին տանը չէր. Կատարինէն նորա ընկերներից մի քանիսի հետ նստած հիւրասենեակում, ալբոմն էր նայում։

—Նայիր, Հեղիկ, ի՞նչ սիրուն է այս հագուստով, ասաց նա

ցոյց տալով Տրունիցկու պատկերը։ Ձեռ կարող երևակայել, թէ ինչ հիանալի էր երէկ նա jeune premier-ի դերում։ Ափսոս, Պետերբուրգ է գնում։

—Ո՞ւմ տանն էին երէկ ներկայացում տալիս, հարցրեց Թոմաեւվը ծոյլ-ծոյլ տեղիցը վերկենալով։

—Իշխանուհի Ռիկօձէի տանը։ Կուզէք, ձեզ հետ ծանօթացնեմ, շատ ուրախ տուն է։

—Շատ կը պարտաւորեցնէք, Եկատերինա Իվանօվնա։

—Իմացած կաց, Դաւիթ, որ նորա մօտ պէտք է անպատճառ կոկուած սօթուած ու փրակով երթայ մարդ, ասաց Ասունին մատները քսելով Թոմաեւի զզզուած մազերին։ Բայց ո՞ւր է կորել Գէորգը, այսքան ժամանակ չը կայ, աւելցրեց նա դուրս նայելով լուսամուտից։

—Ճիշտ, մի քանի ժամանակ է նա շատ տխուր է երևում, ի՞նչ է պատահել, հարցրեց Հեղինէն։

—Ինչ պէտք է լինի որ, գործերը լաւ չեն գնում, կարեկցաբար պատասխանեց Ասունին։ Սկզբում մեծ յոյս կար, որ սկսած գործը լաւ օգուտ կը տայ, իսկ այժմ բանից դուրս եկաւ, որ մեծ վնաս կ'ունենայ։ Ընկերները սառոյցին են քաշել նորան։

—Ով է մեղաւոր, խօսակցութեանը խառնուեց Թոմաեւը։ Գէորգի Ալեքսանդրովիչը կուրօրէն հաւատում էր իւր ընկերակիցներին. այժմ իւր դիւրահաւատութեան պատիժն է կրում։ լաւ է, թող այսուհետև մի քիչ զգոյշ լինի, թէ չէ ամեն մարդու հաւատում է և ամենքից խաբւում։

—Ի՞նչ ես ասում, Դաւիթ։ Ում մտքովը կ'անցնէր, որ այն երիտասարդները, որոնք համալսարանն աւարտելիս մեզ՝ առաջին լսարանի ուսանողներիս՝ հիացնում էին իրանց վսեմ գաղափարներով, յանկարծ այդպիսի անպիտան մարդ դուրս կը գան։ Ասա սորանից յետոյ էլ ո՞ւ ոքի չը պէտք է հաւատանք էլի՞։

—Կարելի է հաւատալ, բայց պէտք է շատ զգոյշ լինել, առաջուց լաւ ճանաչել մարդուն։ Չը պէտք է մոռանալ, որ կովկասցիները այժմ անցողական շրջանումն են գտնւում, նահապետական դրութիւնից դուրս են գալիս, բայց դեռ բոլորովին չեն քաղաքակրթւել. իսկ այդպիսի վիճակում գտնուողները չեն կարողանում դիմադրել

կեանքի հրապոյրներին, փորձութիւններին, որոնք այդ ժամանակ աւելի շատանում, զօրանում են։

—Հեղինէն լուռ լսում էր ու ժամանակ առ ժամանակ պատուհանից դուրս նայում։ Զանգը խփեցին. ներս մտան Սահառունին, Ամիրանօվը Պետրոսեանը։

—Ներեցէք, տիկին Հեղինէ, որ ես երէկ խօսքս չը կատարեցի, ասաց Սահառունին նստելով Նորա կողքին։

—Ինչո՞ւ այս անգամ խօսքներիդ տէր չեղաք, հարցրեց Հեղինէն ժպտալով։

—Ճիշտն ասած, չէի ուզում ոչ ոքի աչքին երևալ, տրամադրութիւնս էլ շատ վատ էր, վախենում էի ուրիշների տրամադրութիւնն էլ խանգարեմ։

—Շատ զուր. հապա էլ ինչ ժամանակւայ հումար են բարեկամները, որ մարդ վատ տրամադրութեան եղած ժամանակը չը գնայ մօտները, դարդը մոռանայ։

Սահառունին շնորհակալ սրտով նայեց Հեղինէին բայց դեռ բերանը չէր բաց արել խօսելու, որ Կատարինէն պատասխանեց Հեղինէին։

—Զէ մի ի՛նչ. բաւական չէ, որ մարդ ինքը վատ տրամադրութեան է, գնայ ուրիշների մօտ, որ նոցա քէֆն էլ փչացնի։

—Գործերդ ի՞նչպէս են, Գէորգ, ուղղում են թէ էլի առաջւայ նման են, սրտացաւութեամբ հարցրեց Ասունին։

—Կարծես ուզում են ուղղել Տիգրանի ու Միքայէլի շնորհիւ։ Այս շաբաթ դու շատ չարչարուեցիր, չեմ իմանում ինչպէս պէտք է քո լաւութիւնիցդ դուրս գամ, դիմեց նա Պետրոսեանին և պինդ սեղմեց Նորա ձեռքը։ Վախենում եմ իմ պատճառով ուշացած լինես, ժամանակին չը հասնես քո գործին։

Բոլորը աչքները գարձրեցին Պետրոսեանի վերայ. խեղճը ամօթից չէր իմանում ինչ անի. վերջապէս կարծես ոհանութեամբ քթի տակին մրմրթացրեց։

—Էհ, ինչեր ես ասում... իմ պրածս դատարկ բան է, ա՛յ Միխայէլ Պետրովիչը...

—Նա, դորա ընկերներին «զորս դու պատուիրեցիր», մի լա՛ւ դրատեցի, ուռած—ուռած ասաց Ամիրանովը առանց աչքը հեռացնելու «Կաւկազ» լրագրի առաջին երեսից։

—Փառք Աստծու, որ ազատուեցիր, շնորհաւորում եմ, ասաց Թոմաևը տեղիցը վերկենալով։

—Մինչև մի ուրիշ նոյնպիսի դէպք, հեգնօրէն արտասանեց Ամիրանովը։

Է, եղբայր քանի քանի անգամ ասել եմ քեզ, որ բացի ծառայութիւնից ուրիշ գործունէութիւն չը կայ, խրատի ձևով աւելցրեց նա։

—Ճիշտ որ, արի դու ծառայութիւն մտիր, հաւատացնում եմ որ գոհ կը մնաս, համոզում էր Սուրենին։ Նայիր անցեալիդ. այս երեք տարուայ ընթացքում բացի դառնութիւններից ու թշնամիներից ի՞նչ ես վաստակել։

—Իմ մասին խնդրեմ էլ մի խօսիր, Աղեքսանդր, բարկացած դադարեցրեց նորա խօսքը Սահառունին։ Մի անգամ ընդ միշտ խնդրում եմ, որ իմ մօտ ծառայութեան անուն չը տաս, ես ծառայութեան համար ոչ պատրաստուել եմ, ոչ էլ ընդունակութիւն ունեմ։

—Իսկ եթէ ապրուստի ուրիշ դուռ չը կա՞յ, տհաճութեամբ ասաց Կատարինէն։ Սանամայրս, Ելիզաւետա Բօգդանովնան, իշխանուհի Շակունին, ամենքը զարմանում են թէ ինչու չես ուզում ծառայել. բոլորն էլ ասում են, որ ծառայութիւնից աւելի ձեռնտու ու պատուաւոր գործունէութիւն չը կայ։

Սահառունին հոգոց քաշեց ու ուզում էր պատասխանել, բայց յիշեց, որ ինքը շատ անգամ է կնոջը բացատրել իւր հայեացքը ծառայելու մասին, բայց նա չը կամենալով հասկանալ բանի էութիւնը, միշտ միևնոյնն է կրկնում, ու լռեց։ Ցիշեց Սահառունին, թէ ինչպէս շատ անգամ դրամական սուղ դրութեան մէջ գտնուելիս գժուարացել է նորան ասել, որ պէտք է ծախսերը քչացնել։ Ինչեր չէր անում նա, ինչ զգուշութիւններ չէր բանացնում, որ կնոջ սիրտը չը կոտրի գորանով, բայց էլի չէր լինում, նա իսկոյն սկսում է լալ։ Թէև Սահառունին սրտիցը պինդ էր, բայց կնոջ արտասուքներին չէր դիմանում։ Կնոջը միանգամից չը գրգռելու համար, նա վճռեց քիչ-քիչ նորան սովորեցնել աւելի համեստ կեանք վարելու և այդ պատճառով չը նայելով իւր նիւթական սուղ դրութեանը քիչ էր պատահում, որ կնոջը զրկէր այս կամ այն թանկ արժող զարդու-

թիւնից և բաւականանում էր միայն նորանով, որ աշխատում էր համոզել կնոջը։

Ոչ ոք խօսելու սիրտ չ'ունէր. բոլորն էլ լուռ ու մունջ ընկղմել էին մտածմունքների մէջ։ Վերջապէս Ամիրանովը ընդհատեց լռութիւնը, առաջարկելով կնոջը գնալ տուն։

—Ուր էք շտապում, մնացէք, միասին թէյ կը խմենք, խնդրում էր տանտէրը։ Կատեա ջան, ինչու չեն բերում հեշտաեռը։

—Վա՛յ, բոլորովին մոռացել էի։ Ասաց ու օպերայից ինչ որ մի եղանակ դնգնացնելով դուրս եկաւ սենեակից։

—Ո՞ր օրն է լինելու, Տիզրան, հայոց օրիորդական դպրոցի օգտին տրուող ներկայացումը, հարցրեց Ասունին։

—Հինգշաբթի։ Այ, պարոններ, տոմսակները, վերցրէք ամեն մէկդ ձեր ծանօթների շրջանում ցրելու համար. դուք գիտէք, որ ես այդ բանում շատ անշնորհք եմ, ասաց Պետրոսեանը գրպանից մի ծրար տոմսակներ հանելով։ Պէտք է աշխատել այս տարի մի քանի ներկայացումներ, նուագահանդէսներ սարքել, որքան կարելի է շատ փող հաւաքել, թէ չէ ոչ միայն նոր ուսումնարան չենք կարող բանալ, այլ և ստիպուած կը լինենք եղածներից մի քանիսն էլ փակել, որովհետև շատ անմխիթար դրութեան մէջ են գտնւում, աւելացրեց նա աւելի ու աւելի ոգևորուելով։

Սահառունին ու Ասունին հաստատեցին նորա ասածը և մի քանի բոպէից յետոյ ընկերների մէջ տաք վիճաբանութիւն սկսեց հայոց ծխական ուսումնարանների դրութեան ու նշանակութեան մասին։ Թոմաևը հերքում էր հայոց սեփական ծխական ուսումնարաններ ունենալու անհրաժեշտութիւնը. Սահառունին ոգևորուած ապացուցանում էր մայրենի լեզուի կարևորութիւնը տարրական կրթութեան համար. Պետրոսեանը յուզուած ժամանակ առ ժամանակ խառնւում էր խօսակցութեանը, մէկ երկու խօսք էր ասում Թոմաևի դէմ և կամ ինքն էր լսում ու սկսում մօրուքը անխնայ կերպով ձգձգել կամ խօսքը կտրում էին, չէին թողնում շարունակի. Ասունին էլ նոցա կողմն էր, իսկ Ամիրանովը «թէ պայտին էր խփում, թէ մեխին։

—Լաւ, Գէորգ, իսկ թեմական դպրոցները ձեր կարծիքով ինչ նշանակութիւն ունեն։

—Նատ մեծ, Դաւիթ։

—Գիտեմ որ կարևոր նշանակութիւն էք տալիս. այդպէս որ չը լինէր, այնքան ժամանակ ու ջանք չէիք գործ դնիլ նոր կանոնադրութիւն կազմելու համար։

—Թեմական դպրոցները միակ ուսումնարաններն են, որտեղից կարող են արժանաւոր քահանաներու ժողովրդական ուսումնարանների համար հմուտ ուսուցիչներ դուրս գալ։ Իսկ այժմ մեր ժողովուրդը ինչ աւելի մեծ կարօտութիւն ունի քան արժանաւոր քահանաների ու գիւղական ուսուցիչների։ Նոքա պէտք է միջնորդի դեր կատարեն...

—Ում չէ յայտնի, տաքացած սկսեց խօսել Պետրոսեանը, որ ժողովրդի սկզբնական կրթութեան յաջողութիւնը անմիջապէս կախուած է գիւղական քահանաների ու ուսուցիչների պատրաստականութեան աստիճանից։

Թոմաեւը՝ ըստ երևոյթին՝ համոզուեց ու շարունակում էր անհոգ կերպով նայել չորս կողմը պատած ծուխի քուլաներին։

—Պարոններ, ձեր վէճը մարդ կը քնացնի, յօրանջելով ասաց Կատարինէն։ Աւելի լաւ կը լինի գնանք թէյ խմենք։

Բոլորը գնացին սեղանատուն։

—Երևի գլուխներդ տարանք մեր վէճով, հարցրեց Սահառունին նստելով Հեղինէի կողքին։

—Ինչ էք ասում. ընդհակառակը, դա ուզում է մանրամասնօրէն իմանալ, թէ ինչ բարեփոխութիւններ են կատարում դպրանոցում, ասաց Կատարինէն ծիծաղելով։

—Ձի՛շտ։

Սահառունու ձայնի փոքր ինչ հեգնական եղանակը դիպաւ Հեղինէի սրտին։

Նա անթարթ նայեց Նորա աչքերին. Նորան թւաց, թէ Հեղինէի աչքերը վառւում են հարցասիրութեամբ, նոր բան լսելու փափագով և միևնոյն ժամանակ կարծես յանդիմանութիւն են արտայայտում։

—Ներեցէք, տիկին Հեղինէ, աղաչական ձայնով բացականչեց Սահառունին. ինձ համար այնքան սովորական է դարձել մեր կանանց անտարբերութիւնը դէպի հասարակական խնդիրները, որ ես

անգիտակցօրէն ձեր հարցասիրութեան անկեղծութեանն էլ կասկածով վերաբերեցի։

Նա աթոռը մօտեցրեց Հեղինէին և սկսեց պատմել։

—Թ.-սում, ինչպէս ձեզ յայտնի է, մենք նիւթական կողմից ապահովուած միայն մի ուսուցիչարան ունինք—թեմական դպրանոցը։ Այդ ուսուցիչարանը թէ իւր ուղղութեամբ և թէ ծրագրի ու դասաւանդութեան եղանակի կողմից շատ է յետ մնացել ժամանակի պահանջներից. նորան այդ անմխիթար վիճակից հանելու համար արմատական փոփոխութիւն է պէտք։ Ահա այդ ի նկատի առնելով մենք աշխատում ենք, որ մասնաւոր եկեղեցական եկամուտները տրւեն ուսուցիչարանին և հոգևորական հոգաբարձուների տեղ, որոնք ի չարն են գործ դնում իրանց իշխանութիւնը, ընտրւեն աշխարհական հոգաբարձուներ։ Իսկ հոգևորականութիւնը տաստիկ դէմ է մեր ձրգտումներին։

—Հասարակութիւնը, որքան ես նկատել եմ, մեծ յոյս ունի ձեզ վերայ։

—Սխալւում էք, տիկին Հեղինէ, այս բանում ես միայն ոչինչ չեմ կարող անել. մենք ամենքս, ժողովրդից ընտրւած պատգամաւորներս, միասին պէտք է ամեն ջանք դործ դնենք այդ նպատակի իրագործման համար։ Իսկ նոր ընտրւած հոգաբարձութիւնը կ'աշխատի շարունակել մեր սկսածը, ներքին բարենորոգութիւններ մտցնել դպրանոցում։

—Այդ բոլորը լաւ է, բայց տուն գնալու ժամանակ է, ասաց Ամիրանովը կնոջը։

—Ես մի քիչ էլ դեռ կը մնամ, Միշէլ. դուք ինձ տուն կը հասցնէ՞ք յետոյ, Գէորգի Ալեքսանդրովիչ։

—Մեծ ուրախութեամբ։

Հեղինէն մարդուն մինչև սրահը ճանապարհ դցեց։ Երբ որ նա վերադարձաւ, Ասունին աթոռ առաջարկեց, որ նստի և հարցրեց նորան հայերէն.

—Տիկին Հեղինէ, ինչո՞ւ դուք երբէք հայերէն չէք խօսում։ Ձեր ուսուցիչն ասում է, որ դուք շատ լաւ դիտէք հայերէն։

—Ճիշտ է, ես բաւական լաւ հասկանում եմ, բայց ազատ խօսել չեմ կարողանում։

—Ափսո՛ս։ Իսկ եթէ դուք հայերէն խօսէիք, գիտէք, որքան օրիորդներ ու տիկիններ ձեր օրինակին կը հետևէին։ Բայց կարծեմ Պետրոսեանը հաւատացած է, որ այդ լինելու բան չէ։

—Ե՞ս. այո ես հաւատացած եմ... որովհետև կրթուած կուսակ կանայք շատ արհամարհանքով են վերաբերուում հայերէն լեզուին։ Ես համոզուած եմ, որ նոքա աւելի շատ չինական լեզուով կը սկսեն պարապել քան իրանց մայրենի լեզուով, մաղձոտութեամբ արտասանեց Պետրոսեանը։ Մի սեսակ ցաւ է, էլի։

—Սխալուում ես, Տիգրան։ Ճիշտ է տասը տարի սրանից առաջ այդպէս էր, բայց այժմ մենք այդ ասելու իրաւունք չունինք։ Ես շատ օրիորդներ ու տիկիններ եմ ճանաչում, որոնք սկսել են հայերէնով պարապել և մեծ յառաջադիմութիւն են անում. փոխանակ նոցա վերայ յարձակուելու, պարոններ, աւելի լաւ կանէք եթէ խորհուրդներով օգնէք նոցա, հասկացնէք մայրենի լեզուի նշանակութիւնն ու անհրաժեշտութիւնը, և այն ժամանակ, հաւատացած կացէք, ձեր խօսքերը զուր չեն կորչի։

Ասունին ոգևորուած էր խօսում և նորա՝ սովորաբար ծաղր արտայայտող՝ աչքերը փայլում էին ոգևորութեան կրակով։ Նա՝ բառիս բուն նշանակութեամբ՝ ազգասէր կուսակ չէր կարող, բայց մի ամենաչնչին առիթ անգամ կարող էր նորա ազգասիրական զգացմունքը քորքոքել, որ՝ պէտք է ասել՝ շատ շուտ էլ սառչում էր. ընկերները ներողամտութեամբ էին վերաբերուում Ասունու այդ բոպէական բորբոքումներին, որովհետև գիտէին, որ ինչ որ Ասունին ասում է, անկեղծ է ասում և ոչ թէ աչք շլացնելու համար։ Այս անգամ էլ երբ որ Ասունին սկսեց պնդել, թէ այսուհետև իրանք պէտք է իրար հետ միշտ հայերէն խօսեն, բոլորն էլ ժպտացին, հաւատացած լինելով, որ ինքը Ասունին ամենից առաջ կը քանդի այդ պայմանը։

Նոցա վիճելու ժամանակ Կատարինէն թէյի պատրաստութիւն էր տեսնում։

—Ինչ շոք է հեշտաեռի մօտ, ասաց նա տաքութիւնից կատկարմիր կտրած։

—Տուր լինձ, ես թէյ չինեմ, իսկ դու դաշնամուր ածա։ Թէյ կը խմենք, ասաց Թոմաեանը, որ երաժշտութեան սիրահար էր։

Կատարինէն գնաց դահլիճը. Սահառունին էլ գնաց այնտեղ,

բաց արեց դաշնամուրը և աթոռին կոթնած ուշադրութեամբ լսում էր։

—Ֆէֆս եկաւ, սիրելիս, տեսնելով թէ որքան մեծ յառաջադիմութիւն ես արել ածելում, ասաց նա կնոջը հիւրերի ցրուելուց յետոյ։

—Այդ քեզ այդպէս է թւում քո թափառական կեանքից յետոյ։

—Ես էլ չեմ թափառի այսուհետև, հոգիս։

Սահառունին շատ անգամ ինքն իրան մեղադրում էր, որ կնոջը շաբաթներով, երբեմն և ամիսներով մենակ է թողնում. շատ անգամ նորա դէմքը կնճռւում էր երբ որ յիշում էր, որ իւր երկու տարուայ ջերմեռանդ գործավարութեամբ ոչ ոքի ոչինչ օգուտ չի տուել, իսկ ինքը գուցէ ընդ միշտ զրկւել է բախտաւոր ընտանեկան կեանքից։

—Կուզէի՞ր, Կատեա, որ ես այնպիսի գործով պարապէի, որ կարողանայի աւելի ժամանակ նւիրել քեզ, քեզ հետ լինել, անպասելի կերպով հարցրեց նա։ Ինչո՞ւ ես լռել ու այդպէս տարօրինակ կերպով նայում ինձ վերայ։ Էլ ինձ չե՞ս սիրում։

Սահառունու զգացւած ձայնը ներգործեց կնոջը և նա քնքշութեամբ բռնեց մարդու ձեռքը։

—Էհ, ինչ մտքեր են գալիս գլուխդ։ Ի հարկէ սիրում եմ... Սանամօրս գնալուց յետոյ, Գէորգ, սիրտս մի քիչ տխրել է, բայց այդ ոչինչ, չէ՞ որ դու ուր որ գնաս ինձ էլ հետդ կը տանես, այնպէս չէ՞, ոգևորւելով հարցրեց Կատարինէն։

—Սահառունին չէր իմանում ինչ պատասխանի նորան և մրթքամոլոր վերկացաւ ու գնաց առանձնասենեակը։

Միւս օրը երբոր ժամի մէկից անց Սահառունին մտաւ կնոջ սենեակը, նա ծոյլ—ծոյլ ինչ որ ամսագիր էր թերթում։

—Օ՛ֆ, Գէորգ, ձանձրութիւնը հոգիս մաշում է, չեմ իմանում ինչ անեմ օրը մի կերպ մթնացնելու համար, չե՞ս գայ այցելութիւններ անենք։

—Այսօր թատրոն ենք գնում, իսկ այցելութիւնները, հոգիս, կը յետաձգենք կիւրակէ օրւան։

Կինը ուռեց և այնպէս էր պատասխանում մարդու փաղաքշանքներին ու հարցերին կարծես բերնիցը վարձ էին ուզում։

Ցանկարծ զանգահարութեան ձայն լսւեց, և իսկոյն ներս թռան

օրիորդ Միհրանովները։ Մի քիչ յետոյ էլ Նոցա մայրը Ելիզաւետա Բոգդանովնան։ Կատարինէի դէմքը իսկոյն պարզուեց և Նա աշխուժի եկաւ։ Սահառունին մնաց զարմացած տեսնելով, թէ ինչպէս կինը մի ակնթարթում կերպարանափոխուեց. նա յօնքերը կիտեց և անկատելի կերպով գահլիճից դուրս եկաւ։

—Ինչ լաւ երգիչների խումբ է այս տարի մեզնում, չէ՞, Կատեա, ասաց Սոֆիա Միհրանովան։

—№ 20 օթեակը երկրորդ աբոնեմենտին էլ քոնն է լինելու, չէ՞, հարցրեց Նադեան։

Կատարինէն տարակուսած, չէր իմանում ինչ պատասխանի։

—Ի հարկէ էլի պէտք է վերցնէք, ամենալաւ օպերաները երկրորդ աբոնեմենտին են նշանակուած, համոզիչ եղանակով ասաց Ելիզաւետա Բոգդանովնան։

Կատարինէն շուտ-շուտ հրաւիրում էր օրիորդ Միհրանովներին իւր օթեակը և այդպիսով ազատում էր Ելիզաւետա Բոգդանովնային առանձին օթեակ վերցնելու ծախսից. ահա թէ ինչու այդ հարցը հետաքրքրում էր նորան։

—Ինչ մարդավարութիւն է, Դէորգ, հիւրերին մենակ թողնել ու գնալ, տհաճութեամբ ասաց Կատարինէն մարդուն հիւրերի գնալուց յետոյ։

—Դու վաղուց գիտես, որ այդ ընտանիքը ինձ դուր չի գալիս։ Ես շատ ուրախ կը լինէի, եթէ մօտ յարաբերութիւններդ նոցա հետ կտրէիր։ Եթէ դու գոնէ մի փոքր յարգում ես ինձ, պէտք է խնդիրքս կատարես։

—Ա՛յ քեզ բան. Դու կարող ես չը սիրել նոցա, բայց իրաւունք չունես ինձնից պահանջելու, որ ես էլ անպատճառ քո պէս վերաբերուեմ նոցա։ Այդ համարեա միակ ուրախ ընտանիքն է հայերի մէջ և միակ տունն է, ուր հաւաքւում է օրինաւոր հասարակութիւն։

—Կատեա, հօ գիտես, որ իմ պահանջս կապրիզից չի առաջ գալիս. ես չեմ ուզում, որ քո պէս մաքուր, ազնիւ էակը իւր հեշտ յափշտակուող բնաւորութեան շնորհիւ վարակուի այն կեղտից, որ...

—Օ՛ֆ, ձեռք քաշի, մարդու զզւանքը գալիս է այդպիսի խօսքեր լսելիս, ընդհատեց նորա խօսքը կինը։ Այ, Ալեքսանդր Վասիլիչն եկաւ, հարցրու տես ով գնալ-գալ չ՝ունի Միհրանովենց հետ։

—Ցանձախել նոցա երեկոյթները ձեզ պէս սիրուն կանանց ընկերութիւնից հաճոյք ստանալու համար և բարեկամութիւն անել այդ ընտանիքի հետ—գրանք ջոկ բաներ են։

—Դուք էլ էք այդպէս ասում, հա՛։

Ասունու կատակներից Կատարինէն ուրախացաւ և խոստացաւ մարդու ցանկութիւնը կատարել։

Մի քանի օր անցած Սահառունին գործից տուն դառնալով Կատարինէին սուգ ու շիւանի մէջ տեսաւ։

—Ինչ ես լալիս, Կատեա, դու գիտես, որ աչքերիդ արտասուք տեսնելիս հոգիս քաղում է, ասաց նա քնքշութեամբ բռնելով նորա ձեռքերը։

—Ինչ է, կարծում ես, քիչ բան է ինձ համար, որ չեմ կարողանում նորոգել օթեակի աբօնեմենտը։ Մեր բոլոր ծանօթները արդէն գրւել են։ Չեմ իմանում քեզ ինչ է պատահել, երէկ խնդրեցի մետաքսէ շոր առնես՝ չ՝առար, այսօր օթեակին չես թողնում գրւեմ, վտղը ով է իմանում..,

Էլ չը կարողացաւ շարունակել, լացից կոկորդը բռնւեց, բայց մարդու վրայ յառած հայեացքը յանդիմանութեամբ լի էր։

—Միթէ՞, հոգիս, կարծում ես թէ դիտմամբ միայն քեզ վրշտացնելու համար եմ անում այդ։ Դու պէտք է լաւ իմանաս, որ եթէ ձեռքիցս գար, չէի թողնի որ դու զրկւէիր թողնի որ դու զրկւէիր այդ անմեղ հաճոյքներից։ Համբերութիւն ունեցիր, սիրած ուրախ պահիր, որ ես էլ քեզ տեսնելով սիրտ առնեմ, կարողանամ առաջւայ եռանդով աշխատել։ Արտասունքդ որ տեսնում եմ, Կատեա, էլ սիրտ չի մնում բան անելու։

Սահառունին սկսեց գգւել կնոջը։ Նա զգացւեց և գրկելով մարդուն խոստացաւ էլ լիմարութիւններ չ՝անել։ Կատարինէն նոյնքան հեշտ ու շուտ էր մխիթարւում, որքան հեշտ յուսահատւում էր...

Որքան Սահառունին աշխատում էր, որ կինը տանը ուրախ լինի, չէր լինում. նա օրէցօր աւելի ձանձրանում ու տխրում էր, և միայն այն ժամանակն էր նորա երեսին ծիծաղ երևում, երբ որ մարդը առաջարկում էր մի տեղ զբօսանքի կամ հիւր գնալ։ Մարդու բոլոր ջանքերը զարգացնելու կնոջ խելքը, ընդլայնելու նորա աշխարհահայեացքը, լուսամիտ հայեացքներ ներշնչելու նորան ի զուր

անցան։ Սահառունին վերջապես համոզուեց, որ ուղղուելու յոյս չը կայ. դատարկութեան արմատը շատ խոր էր։ Նա շատ էր լսել ինստիտուտի կրթութեան թերութիւնների մասին. այժմ նա իւր աչքով տեսաւ, թէ ինչպէս ինստիտուտի վայրիվերոյ ուսումը զարգացնելով օրիորդների մէջ փայլելու, աչք շլացնելու ցանկութիւնը, բոլորովին մեռցնում է նոցանում կատարելագործելու, զարգանալու ձգտումը։

(Կը շարունակուի)